

891.542-1
J-25

blue plaid

blue plaid

891.99
J-25

6 NOV 2011

891.542-1

Ծ-25

ՀՐԱՄԱԳԵՂՆ ԵՒԳԻՆԵ

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԹԵԱՆ
Տ. Տ. Գէորգ Ե-րդ Ամենայն Հայոց Աստուածաբնտիք
Ժայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի Հայրապետու-
թեան ժամանակ

Տ. Միիթար Արքական Եպիսկոպոսի Վրաստանի և
իմերէթի Հայոց Թէմակալ առաջնորդութեան Երկրորդ
տարին

Համաշխարհային պատերազմի չորրորդ տարուայ
սոսկալի օրերում.

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳ ԶԱՅԱԱՅԻ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

ԳԻՆՆ Է Հ ՌՈՒԲՅԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Տակարան Վրաստան Հանրապետութեան Քաղաքն. Միութ.
1919

ՀՐԱՇՎԵՂՆ ԵՒԳԻՆԵ

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՄՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ԳԵՆՈՐԳ Ե-ՐԸ Ամենայն Հայոց Աստուածալնութիր
ծայրագոյն Պատրիարք Կաթողիկոսի Հայքապետու-

891.542-1

Ա-25 Ա.

թեան ժամանակ

Տ. Միկիթար սրբազն եպիսկոպոսի Վրաստանի և
իմերէթի Հայոց Թէմակալ առաջնորդութեան Երկրութ
տարին

Համաշխարհային պատերազմի չորրորդ տարուա
սուկալի օրերում:

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱԽԱԳ ՔԱՐԱՆՅԵԻ ՍԱՆԴԱԿՈՒՆԻՈՑ

1918

Տպարան Վրաստանի Հանրապետութեան Քաղաքն. Միութ.
Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Կամենալով քահանայութեանս քառասնամեակը՝
որևէ մի երկասիրութեամբ նշանաւորել, որ լրացաւ
1917 թ. յունիսի 23-ին. ընտրեցի նիւթ հրաշագեղ
եւգինէ ս. կուսի կեանքը. որ լի է զարմանալեաց
զարմանելի և շատ հետաքրքիր և օրինակելի գոհար-
ներով. նա՝ ինչպէս դէմքով անհամեմատ և անզու-
գատիպ գեղեցկուհի է եղել, նոյնպէս էլ ապշեցուցիչ
գործքերով և կեանքի սքանչելի յեղաշրջումով՝ գե-
ղեցկուհեաց գեղեցկուհի է հոչակուել. սւսալ յոյս
ունիմ և հաւատում եմ, որ ընթերցողները կարող են
սորա շատ կէտերից լի ու լի օգտուիլ. մանաւանդ
եկեղեցականների թատրոնական ներկայացման ժամա-
նակ, և ահա այդ կը լինի քահանայութեանս քառաս-
նամեակի միակ միիթարութիւնը:

Քրիզոր ասազ քահանայ Մանդակունի:

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՄՐՏՎԻՆ ՕՐՅՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՎՍ

ՆԻՒՐՈՒՄ ԵՄ

Բարեգործ եւ յայտնի վաճառական մեծ. պ. Ղեւոնդ Ասրեւան

Այտնեանցին

ԳՐԻԳՈՐ ԱԽԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ



Յիշեալ բարեգործի լուսանկարը և կենսագրութիւնը
դուրս կցայ «ՈՍԿԻ ԲԱՐԵԿԱՄԻՒՄ» Հինգերորդ տպագրութեան մէջ:



Շատ աղջիկներ ստացան մեծութիւն, շատերն արին
քաջութիւն, բայց դու առաւել եղար եւ բոլորից զերա-
զանցեցիր: Առակ լա. 29:

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ՊԱՏԿԵՐ.

Կոմոտոս կայսրը և մեծ իշխան Փիլիպպոսը, ար-
քունի դահլիճումը նստած՝ սկսում են պաշտօնական
խոսակցութիւն:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս, Եգիպտոսի վերայ փոխարքայ
ուղարկեցի իշխան Լինոսին, իսկ նա՝ չընայելով իւր
բարձր կրթութեանը, փոխանակ զեղեցիկ բարեկարգու-
թեամբ երկիրը պայծառացնելու և ժողովուրդը խա-
ղաղութեան մէջ հանգիստ և ապահով պահելու՝ կա-
մեցել է օգի մէջ ամրոցներ կառուցանել, հակառակի-
պէս զետնի վերայ եղածներն էլ հողի հետ է հաւա-
սարեցրել, յօնքը շինելու տեղ՝ աչքն է հանել, հաւա-
տացել է՝ որ իսելք ասած բանը՝ միայն ինքն ունի, և
այսպէս նշանակութիւն չէ տուել իւր փորձառու
խորհրդականների խորհուրդներին, և արհամարհելով
վարկարեկել է իւր մերձաւոր բոլոր պաշտօնեանե-
րին, չընայելով՝ որ իւր աչքը, իւր ձեռքը և միան-
գամայն իւր ոյժը և իւր պատիւն ու փառքը՝ իւր
իմաստուն պաշտօնեաներն են և բացի այս ամենից,

ժողովրդի և ազգերի միջիցն՝ իրան մօտեցըել է խառնակիչ և ջուրը պղտորող մարդկանց. ահա և այսպէս ամբողջ Եգիպտոսն այն աստիճանի զզուեցըել է, որ բոլոր կողմերից բողոքի և ապստամբութեան ձայներ են լսվում, ուստի հարկադրուած նորան յետ եմ կանչելու և նորա տեղը քեզ եմ կարգելու Եգիպտոսի վերայ փոխարքայ:

Փիլիպպոս.

Մեծ կայսր, անհուն շնորհակալութիւնս յայտնում եմ Ձեր կայսերական Մեծութեանը, Ձեր այդ մեծ շնորհքի վերաբերութեամբ, սակայն կը ցանկայի որ այդ ծանր և բարձրագոյն պատիւը շնորհէիք ինձանից աւելի փորձառու և մեծ արժանիք ունեցողներից մէկին՝ որ իւր հանճարովը բոլորին համակրելի լինէր և երկիրը ամենայն բարեկարգութեամբ վերականգնեցնէր:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս, այդ ասածդ դժուարին է, որովհետև մարդիկ դեռ այն աստիճանի չեն բարձրացել՝ որ հանճարաւորն ու լաւագոյնը չէթէ բոլորին՝ այլ գոնէ մեծամասնութեանը հաւանելի լինի. բաւական համարիր՝ որ ես քեզ Եգիպտոսի փոխարքայութեան պաշտօնին ամենաարժանաւորագոյնն եմ համարում, ուստի առանց տատանուելու պէտք է յանձն առնես այդ պաշտօնը ու գնաս:

Փիլիպպոս.

Ձերդ կայսերական Մեծութիւն, ես խոնարհվում եմ Ձեր այդ բարձրագոյն հրամանի առաջ և յանձն եմ առնում այդ ծանր և պատասխանատու պաշտօնը, և վստահ եմ արդարացնել Ձեր իմ վերայ ունեցած բարձր համարումը:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս, երանի այն պետութեանը՝ որի պաշտօնեաները՝ համարվում են կենդանի օրէնքներ, որ ոչ ոքի կրքով և բարկութեամբ չեն պատժում, այլ պատժում են միայն օրէնքի արդարութեամբ և հասարակաց օգտի դիտաւորութեամբ, և այսուամենայնիւ իմ ցանկութիւնն այս է, որ աստուածապաշտութեան ուսումն ու գիտութիւնը երկրի բոլոր խաւերում տարածես, մեր աստուածներին զոհեր, քուրմերին՝ առատ նուէրներ բաշխես, ժողովրդի և ազգերի բոլոր դասակարգութեանց՝ իրանց միջումը խղրութիւն չըդնես, մի ազգը՝ միւս ազգի հետ չը կրուացնես, մէջները ատելութեան որոմը չը սերմանես, այլ միշտ ջանաս նորանց մէջ անկեղծ սիրոյ եղբայրութիւն հաստատել և միշտ խաղաղ ու ապահով վիճակի մէջ պահել. ամբողջ երկիրը զանազանակերպ բարեկարգութեամբ ծաղկեցնել, պատիժը տալ օրէնքի արդարութեանը համեմատ, իսկ մահապատիժ տալ միմիայն մարդասպանին. և այսպէս ապա-

տամբութեան մտքերը բոլորովին մոռացնել յաջողիս:
(Սպասաւորը ներս է մտնում և ասում)

Սպասաւոր.

Վեծ կայսր, մի քրիստոնեայ են բերել' որ չի
զոհում մեր աստուածներին:

Կայսր.

Ներս բերէք, սա լաւ գէպք է իշխան Փիլիպպոս,
որ քո ներկայութեանը քննեմ, որ այս կէտի վերայ
էլ ունենաս հարկ եղած հմտութիւնը:

Փիլիպպոս.

Մեծ կայսր, եթէ Զեր Մեծութիւնը չի ձանձրա-
նալ՝ բարւոք կը համարիմ քրիստոնեաների վերաբե-
րութեամբ 25 տարի առաջ իմ աչքով տեսածը պատ-
մել:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս պատմիր, հետաքրքիր եմ լսե-
լու, իսկ դու սպասաւոր, մեծատուն քրիստոնեային
ներս մի բերել, թող փոքր ինչ սպասէ:

Փիլիպպոս.

Մեծ կայսր, երբոր ես պատանի էի՛ վառվուն

հետաքրքրութեանս յագուրդ տալու համար, մի օր
մտայ քրիստոնեաների տաճարը, այնտեղ ժողովրդի
սէջ տեսայ 80 ամեայ մի զառամեալ կին, որը մեր
դրացին լինելով՝ նորան ձանաչում էի և նորա 90
ամեայ ամուսնուն, նա տաճարի մէջ արտասուա-
խառն աչքերով և հասկանալի ձայնով սկսաւ աղօթել
այսպէս:

«Վայ ինձ, արդեօք ով ծնաւ ինձ, կամ որ մայրը
յղացաւ ինձ, որովհետեւ անիծուած ծնայ իմ ժողո-
վրդի մէջ, որ եղած եմ նախատինք Աստուծոյ տա-
ճարի մէջ:»

Վայ ինձ, արդեօք ես ում նմանուեցայ, «ոչ նը-
մանուեցայ երկրի գաղաններին և ոչ երկնի թռչուն-
ներին, որովհետեւ ով իմ Աստուծ, երկնի թռչուն-
ները՝ ձագեր ունին քո առաջ, գաղաններն և բոլոր
անասուններն՝ ծնունդ ունին քո առաջ:»

Վայ ինձ, արդեօք ես ում նման եմ՝ ջրերի նը-
ման էլ չը գըտնուեցայ, որովհետեւ ջրերն էլ ունին
քո առաջ ծնունդ և նորանց միջի զեռուններն և
ձկներն օրհնումնեն քեզ:»

Վայ ինձ, արդեօք ես ում նմանուեցայ, մինչև ան-
գամ հողին էլ չը նմանուեցայ, որովհետեւ հողը որո-
շեալ ժամանակին պտուղ է տալի, որ մարդիկ վայե-
լին և օրհնեն քեզ, և այս բոլորի մէջ՝ միայն ես եմ
չորացած անպտուղ ծառ:»

Ո՞վ իմ տէր Աստուծ, քո ողորմած աչքը դար-
ձրու իմ վերայ, ինձ էլ տներ մի պտուղ՝ որով ամ-
լութեանս նախատինքը վերանայ ինձանից:»

Ես այս զառամեալ կնոջ՝ ըստիս յիմար խըն-

Փիլիպպոս.

Քահանայի անունն է Եւսէքի բնակութիւնը
մեր տան մօտին:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս, Եթէ այդպէս է, ուրեմն այն
քահանային բերել տուր, որ քո առաջ նորան քննենք,
յետոյ մեծատունին, ու տեսնենք թէ արդեօք կարող
ենք առանց տանջանքի հաճեցնել, որ նա զոհ և երկրպա-
գութիւն մատուցանէ մեր աստուածներին:

Փիլիպպոս.

Մեծ Կայսր, շատ լաւ էք մտածել և շատ հե-
տաքրքիր է, գուցէ կարողանանք իմանալ դորանց
հաւատքի կախարդութեան գաղտնիքը:

(Փիլիպպոսը դուրս է գնում և հրամայում է)

Փիլիպպոս.

Նիկանովը, ահա այս ժամուն վերառ զինւորներ,
գնա և Եւսէքի քահանային պատուով բեր այստեղ պա-
լատը:

(Նիկանովը քահանային բերում է)

Նիկանովը.

Մեծ իշխան, ահա քահանային բերել եմ:

Դրուածքի վերայ ծաղրելով դրւոս եկայ տաճարից՝
քրիստոնեաներին համարելով թեթևախելք, բայց զար-
մացած մնացի՝ ըստ որում, երբոր ամիսները լրացան
այդ զառամեալը ծնաւ մի արու զաւակ՝ որն ահա մի
խիստ գեղանի և իմաստուն քահանայ է:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս, արդեօք քրիստոնեաների հա-
ւատքի մասին դու ի՞նչ կարծիք ունիս:

Փիլիպպոս.

Մեծ Կայսր, քրիստոնեաների հաւատքը՝ ես ըն-
դունում եմ մի չը տեսնուած կախարդութիւն, որին
երբէք խելք չի հասնում, որքան ես մտածում եմ:

Կայսր.

Արդեօք այդ քահանայի ծնողքն այժմ կենդանի են:

Փիլիպպոս.

Այս, կենդանի են, հայրը 115 ասեայ է, իսկ
մայրը 105 ասեայ:

Կայսր.

Քահանայի անունն ի՞նչ է և որտեղ է բնակում:

Եւսէրի.

Մեծ կայսր, բոնութեան ոյժը չի կարող յաղթել նորան՝ որի սրտի մէջ թագաւորում է Աստուծոյ Երկիւղը և հաւատի ճշմարտութիւնը և որի համար ես պատրաստ եմ ամեն կերպ սոսկալի տանջանքներ ընդունել և երբէք չը վհատիլ:

Կայսր.

Եւսէրի, ի՞նչ է ձեր հաւատը, և ի՞նչ է նորա ողին՝ որի համար այդպէս մոլորուած անխնայ տանջվում էք և ջնջվում:

Եւսէրի.

Մեծ կայսր, մեր հաւատը՝ ոչ մարդկային կարծիքների մոլորութիւն է և ոչ էլ ազգային հայրենաւանդ սովորութիւն, այլ բնական քննութեամբ և Հըրէից Ս. Գրքի վկայութեամբ անսխալ ճշմարտութիւն է.

Արդ՝ գիտենք, որ այս աշխարհը՝ որ գեռ Երիտասարդ վիճակի մէջ է գտնվում, սա իւր միջի բոլոր արարածներով՝ հանդերձ անստեղծ, անմահ և անապական չեն, այլ ստեղծուած են՝ մի անստեղծ, անմահ և անկախ էակից և այդ ազատ էակն է մեր Աստուածը՝ որին մենք պաշտում ենք:

Այլ և մեր նախահայրերը և Երայեցւոց Ս. Գրքի մէջ պատմուած աստուածատես ու մարդիկը մեղ պատուիրել են, որ միայն Ամենաբարձրեալ Աստուծոյն

Հ.Ա.Խ.Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
* C.C.P.A ՊՈԽԱԿԱՆ ԲՈՅԼՈՎ
7/7/1922

ալաշտենք, նորա պատիւը չը տանք մարդկանց ձեռական գործ կուռքերին և չը հաւատանք սուսութիւններին մարդկարէներին *) բոլոր մարդկութիւնը՝ առանց ազգի և հաւատի խտրութեան՝ ճանաչենք մի եղբայրութիւն, իրար անկեղծ սիրենք, իրար օգնենք և իրար ցանկանք այն բոլոր բարիքը՝ ինչ որ կը կամենանք մեզ համար, չը կամենանք իրար այն բոլոր չարիքը՝ ինչոր չենք կամենալ մեզ համար, ընտանիքի մէջ սրբութիւն ունենանք, անկեղծ հնագանդութիւն տեղական իշխանութեանը և անսահման հաւատարմութիւն իրաւունքի և արդարութեան մէջ՝ ահա այս է մեր հաւատոքի ողին և պահանջը:

Կայսր.

Գեղեցիկ ես խօսում, ով Եւսէրի, քո իմաստութիւնը քեզ զորել է մոլորութիւնների մէջ. Երբայե-

*) Առանց հաւատի՝ անհնար է Աստուծոյն հաճելի լինել: Երբ. Ժ. Հաւատն է արմատ և հիմն ամենայն արդարութեան:

Հաւատի վերայ տարակուսութիւնը՝ անհաւատութիւն է:

Վատ ժամանակի հասել ենք, հաւատի թշնամիներից անկրօն խօսքեր, մոլար վարդապետութիւններ, սրբափեղ ծաղրածութիւններ տեսնում և միշտ լուս ենք, ուստի հարկադրվում եմ Աստուծոյ գոյութեան մասին կարճ խօսքերով յայտնի զիտնականների արտայատած ճշմարտութիւնները յառաջ բերել պարզամտների մտքերը անհուատների սրբապղծութիւններից չը պղտորուելու համար: Աշխարհիս բոլոր ազգերը հաւատում են՝ որ կայ մէկ Աստուած. հարկաւ պէտք է մի կը ըսն էլ լինի՝ որով մարդիկ կարողանան Աստուծոյն ընծայել այն պաշտօնը, պատիւը և փառքը՝ որ պարտական են. և պէտք է որ այս կը ըսնքը Աստուածից յայտնուած լինի:

Ամեն կողմից՝ ամեն բան աղաղակում և իմացնում է մեզ՝ որ մի Ստեղծող կայ: Հոգենուագ Դաւիթն ասում է «Ամեն բան, ամեն տեղից գոյում է Արարէն:» Տէրտուղիանոսն ասում է «Մենք մեզ պացոյց

ցւոց մեծ գիրքը՝ որին սուրբ ես կոչում, ես նորա
մասին ճիշդը գիտեմ և ունիմ շատ լաւ տեղեկութիւն,
որ նա առասպելներով լիքն է և այն էլ հնարուած
ձեր Քրիստոսի ծնունդից յետոյ, նորա կեանքին հա-
մապատասխան կէտ առ կէտ յարմարեցրած:

Եւսէրի:

Մեծ կայսր, եթէ հաստատ փաստերով ապացու-
ցանեմ Ս. Գիրքի Քրիստոսի ծնունդից հազարաւոր
տարիներ առաջ գրուած լինելլ՝ այնուհետև կը հաւա-
տաս նորա միջի Աստուծոյ հոգւով յայտնագործած
ձշմարտութիւններին:

Կոյսը.

Պատմիր Եւսէր, գուցէ և ես էլ հաւատամ:

Ենք՝ որ Աստուած կայ, մեր միտքը, մեր ձայնը և մեր դէմքը միայն բա-
ւական են մեր ճանաչելու, որ Աստուած կայ. տեսէք որչափ մարդ՝ որ
կայ աշխարհիս վերայ՝ այնչափ միլիոնաւոր բազմութեան մէջ՝ մէկի
դէմքը և ձայնը՝ միւսի դէմքի և ձայնին բոլորովին նման չէր կարող
գտնել, այս կէտումը երկում է միայն մի անհոն իմաստութիւն, որ
այսչափ դէմքերը և ձայները մէկը միւսից տարբեր ստեղծել է:»

Պլուտարքոսն ասում է «Կարող ես աւելի դիւրաւ գտնել մի քա-
ղաք առանց արեկի, քան թէ առանց Աստուծոյ և առանց կրօնի:»

Օգոստինոսն ասում է «Մարմնոյդ գործերից իմանում ես՝ որ
կենդանի ես, հոգի ունիս, այնչափ արարածոց գործերից որ աչքիդ
առաջն են, ինչպէս չես իմանում, որ մի ստեղծող Աստուած ունիս:»

Պղատոն մեծ փիլիսոփան ասում է «Աստուծոյ մարդկային իրաց
վերայ հոգս ու ինամբ ունենալի ուրացողը՝ բացի անաստուածութիւնից՝
մի մեծ ոճիր և մի մեծ ամբարշտութիւն էլ գործում է:»

Լոք իմաստաէրն ասում է «Ինչպէս որ աշխարհս մարդու համար՝
այնպէս էլ մարդն Աստուծոյ համար ստեղծուած է, որ նորան ճանաչէ
և սիրէ, նորան ծառայէ, նորան մեծարէ ու պաշտէ:»

Եւսէրի.

Մեծ կայսր, ես էլ կը հաւատայի, որ Երբայե-
ցւոց Ս. Գիրքը շինծու առասպելներով՝ այն էլ զար-
մանալի հնարագործութեամբ ստեղծագործուած առա-
սպելներով լի մի գիրք է՝ Հրէից իմաստուն խարե-
բաների ձեռքով պատրաստած. բայց երբոր կարդում
ենք ժամանակակից ազգերի պատմութիւնները՝ այն
ժամանակ տեսնում ենք, որ Սուրբ Գիրքը՝ Քրիստո-
սի ծնունդից 273 տարի առաջ Եգիպտոսի Աղէքսանդ-
րեայ քաղաքում գրասէր Պտողոմիոս Փիղագեղինայ
թագաւորի հրամանով՝ Եղիազար քահանայապետի
ուղարկած Ս. Գրքի մի ընտիր օրինակից 70 իմաս-
տուն ուաբիների ձեռքով Երբայականից թարգմանուած
է Յունական լեզու, որի թէ Երբայական և թէ Յու-
նական օրինակները իրար հետ համեմատած՝ գրտ-
նվում են անսխալ և իրար համապատասխան, որոնց

Պլուտարքոսն ասում է «Կը գտնուի ազգ կարդալ չը գիտեցող ան-
տերունջ տուն ու տեղ չունեցող, անկիրթ, դրամ ինչ ասել է՝ չը գիտե-
ցող, առանց ամենսկին տեղեկութիւն ունենալու գեղարուեստից. բայց չի
գտնուի մի ազգ առանց Աստուծոյ. առանց կրօնի, ուխտ, երգութիւն, արա-
րողութիւն և գոհ չունեցող. որով Աստուծոյն կը պաշտէ, որ արժանի
լինի՝ որ Աստուած իրան չարիցը ազատէ և իրան բարիք տայ:»

Անկրօնիներն ասում են «Կրօնը զատիւարակութիւնից առած նա-
խապաշարմունք է, հաւատում ենք՝ որովհետև փոքրութիւնից այնպէս
ենք սովորել:»

Կրօնը, արգարէ զատիւարակութեան հիմքն է, որովհետև Աս-
տուած ինքն է սովորեցրել Աղամին՝ Աղամին էլ իրա որդւոցը սովորեցրել է
իրա որդիքն էլ՝ իրանց յաջորդներին. և յետոյ Աստուած Մովսէսին սով-
որեցրուց և նա էլ Հրէից ազգին. և ահա այսպէս կրօնը հաստատուն.
ստոյգ և աներկանակի հիմն է զատիւարակութեան:

Անկրօնին այլ և ասում են «Կրօնը իշխանների և թագաւորների
քաղաքակիտութեան մի գիւտ եղած է, ժողովրդին Աստուծից պատժե-
քաղաքակիտութեան մի գիւտ է, ժողովրդին Աստուծից պատժե-

երկուսիցն էլ անսխալ օրինակած ունին բոլոր քրիստոնեայ ազգերը, ահա նոյնիմէ այս կէտումն է, որ Ա. Գրքի ճշմարտութիւնը աստուածային է և անհերքելլ:

Կայսր.

Եւսէրի, եթէ ես մի փոքր ժամանակ էլ քեզ թոյլտամ, կարծեմ որ ինձ էլ իմ սուրբ հաւատքիցը՝ դարձնես քո կրօնին, չէ, այդպէս չէ կարելի, արի երկրպագիր մեր մեծ Արամազդին և հանգիստ դարձիր քո տունը:

Եւսէր/ .

Մեծ Կայսր, սկին՝ սկ, սպիտակին՝ սպիտակ ասել հաւատում էք՝ որ յանցանք չէ:

Ու ձայնովը վախեցնելու համար, որ նորանց կարողանան սանձել ու նուանել:

Անկրօններն, եթէ հին պատմութիւնները կարգացած լինէին կը գլուխնային՝ որ կրօնը աւելի շատ հին է՝ քան թագաւորներն ու իշխանները:

Պլուտարքոսն ասում է «Որչափ փնտուեցի՝ չը կարողացայ գտնել կրօնքի ոչ սկիզբը և ոչ հեղինակը»: Ուրեմն յայտնի բան է, որ նորա սկիզբը երկնքիցն է և նորա հեղինակը ինքն Աստուած է:

Կրօնքի ճշմարիս մի ապացոյցը հրաշքն է. իսկ հրաշքն էլ կարող է միայն Աստուած գործել. այն էլ իրա կամքովը՝ սուրբ մարդկանց միջոցաւ:

Հրաշքներ արդէն հին և նոր կտակարանի մէջ լիքն է: Մովսեսի Եփիպտոսի մէջ և անապատումը գործածները, այլ և Յեսուսինը, Եղիայինը Եղիսէինը և շատ շատերինը. նոյնպէս Յիսուսի հրաշքները առաքեալներն են և շատ ու շատ սրբերի գործածները: Անկրօններն ասում են «Այնշափ հրաշքներից՝ որ պատմվում են մենք մի հատն էլ չենք տեսած» ուստի չենք հաւատում հրաշքներին: Օգոստինոսն ասում է «Եթէ այդ ասելու

Կայսր.

Սկին՝ սկ, սպիտակին՝ սպիտակ՝ ասելլ՝ արդարեցնցանք չէ:

Եւսէրի.

Մեծ Կայսր, մի մարդ՝ որ անդամալոյծ լինի ունենայ ձեռներ և ոտներ բայց չը կարողանայ շարժել, նորան պալատումդ որևէ մի պաշտօնի տեղ կը տանք և կամ նորան կը վերցնէք զինւորական մի որ և է ծառայութեան մէջ:

Կայսր.

Ո՛չ, ո՛չ, այդպիսի մի անպէտքական մարդուն՝

խօսք լինէր՝ ուրեմն ես էլ կարող էի չը հաւատալ՝ որ Հոռվիմ կայ, որովհետեւ չեմ տեսել. և ոչ կը հաւատայի՝ որ Ներոն աշխարհիս վերայնուած է այն անգութ բռնաւորը. և ոչ Աղեքսանոր մեծ աշխարհակալը. և ոչ Կիկերոն երեսի ճարտասանը. թէն բոլոր պատմութիւններն նույաց վերայ խօսում են և ամէնն էլ վկայում են և հաւատում

թիւխտոսի, իրա Առաքեալների և սրբերի հրաշքները չէ թէ ծածուկ գործուած հրաշքներ են, այլ յայնապէս և երբեմն հազարաւոր մարդկանց առաջ, այնպէս հրաշքներ՝ ժամանակակից ու ականատես պատմիչներ զրեցին, որ բերանից բերան աւանդութեամբ միշտ ու ամեն տեղ պատմուեցան. լորդները հաւատացին և պատմվում են ու պէտք է հաւատան՝ քանի որ աշխարհն աշխարհն է:

Անկրօններն աշխատում են Քուրմերի, Մովսերի մահաւանդ Լատին կրօնաւորների և Եղուիտների արհեստական և խարէական հրաշքների միջոցաւ Ա. Գրքի գերբնական հրաշքները ջրել, բայց որևէ մի մարդ՝ եթէ Ա. Գիրքը ամբողջովին մտառութեամբ կարդայ, նորա ամեն կէտը հիմնաւոր ուստամնասիրէ, նորա ճշմարտութեանց վերաբերութեամբ ամբարէ նորա միջի լի ու լի բազմակողմանի և աներքելի տե-

չէ թէ չեմ կամենալ տալ պաշտօն՝ այլ և չեմ թոյլ
տալ՝ որ այդպէսը երկի աչքիս առաջ, և տեղ տալ
այն էլ պալատում, ոչ երբէք:

Եւսէրի.

Մեծ Կայսր, այն անդամալոյթը՝ թէ և ոտք ունի՝
բայց չի կարողանում շարժել, ձեռք ունի՝ բայց չի
կարողանում գործել, այսուամենայնիւ գոնէ ունի
կենդանութիւն, հասկացողութիւն և ընդունակու-
թիւն ասել ու խօսելու, այդպիսի մարդուն՝ եթէ ար-
ժանի չէք համարում տալ պաշտօն և տեղ պալա-
տումդ, ուրեմն ի՞նչպէս է, որ ձեր փառաւոր տա-
ճարներումը տեղ էք տուել և պատվում այն կուռքե-
րին՝ որոնք ոտք ունին՝ բայց չեն կարող շարժել,
ձեռք ունին՝ բայց չեն կարող գործել, աչք ունին՝
բայց չեն կարող տեսնել, ականջ ունին՝ բայց չեն
զեկութիւնները՝ այնուհետև դժոխքի դռները՝ նորան երեք չեն կարող
յաղթահարել և նա երբէք չի ընկղմի և կորչի անկրօնների մոլար վար-
դապետութեանց ովկիանոսի մէջ՝ որչափ նորանց խարէութիւնները հա-
մոզեցուցիչ և զորեղ լինի:

Ճշմարիտ է թէ Քուրմերը, Մոգերը և այլ խարեբանները կատա-
րում են սուտ հրաշքներ, բայց եթէ ճշմարիտ հրաշքներ չը լինէին և ոչ
էլ կարող եին սուտ հրաշքներ լինել, որովհետև սուտը ճշմարտին նըմա-
նեցնելով է լինում. այսպէս էլ եթէ ճշմարիտ դրամներ չը լինէին և
ոչ սուտ դրամներ կը լինէին:

Եւ այսուամենայնիւ, ցաւօք սրտի պէտք է ասած, որ «մարդս
այնքան զիւրահաւան կենդանի է, որ ամենամեծ ստութիւններն իսկ
հաւատացնելու համար՝ բաւական է միայն նորանք ասելու կամ գրելու
յանդկնութիւնն ունենայ:» Լամօթ լը վայէր:

«Զը կայ մի վարդապետութիւն, որքան անհեթեթ լինի, որ իր
յարողներն չունենայ. չը կայ ժողովուրդը խաբել ուզող պռոստախօն՝ որ
անպատճառ չը գոնի այնպիսի անձեր՝ խարեբայութեան առարկայ լի-

կարող լսել. բերան ունին՝ բայց չեն կարող խօսել,
այսպիսի աստուածներն ինչու են պէտք, նորանք՝
որոնք չեն կարող իրանց օգնել՝ ի՞նչպէս կարող են
ուրիշին օգնել:

Կայսր.

Եւսէրի, քեզ հրամայում եմ՝ որ աւելի չը խօսիս,
միայն երկրպագես մեր մեծ Արամազդին և պատուով
դառնաս քո տունը:

Եւսէրի.

Մեծ Կայսր, մեր Աստուածը մեզ հրամայում է,
որ մենք քաղաքական բոլոր պահանջներում լսենք
թագաւորին՝ և ամենայն հնագանդութեամբ և հաւա-
տարմութեամբ ծառայենք նորան. իսկ հոգեկան գոր-
ծերում լսենք միմիայն մեր Աստուծոյն, նորա պա-
տիւը չը տանք անշունչ կուռքերին, ուստի թող ձեր
մեծութիւնը չը բարկանայ իմ վերայ՝ որ չեմ կարող
մեր ճշմարիտ Աստուծոյն հակառակ երկրպագութիւն
մատուցանել ձեր կուռքերին:—

Նելու վերայ խիստ գոն լինի. ամենից ծաղրելի յիշմարութիւններն էլ՝
ամեն ժամանակ գտնում են այնպիսի մտքեր՝ որոնց կարողութեանը
կատարելապէս կը յարմարին:» Խորհուրդ արուեստ:

Եւ ահա այս զիւրահանութիւնն է պատճառը՝ որ ճշմարտու-
թեանը հակառակ բազմակողմանի և զանազանակերպ թիւը ու սիալ
վարդապետութեանց մոլորեցուցիչները աճում և բազմանում են և ժողո-
վրդոց մտքերը պղտորեցնելով՝ այս զբախտ աշխարհը գժոխք են դար-
ձնում:

Կայսր.

Եւսէբի, խնայելով քո գեղեցիկ գէմքին, վայելուջ հասակին, ճարտարախօս լեզուին և իմաստուն խօսքերին՝ ներում եմ քեզ, որովհետև մեր օրէնքը թոյլ չի տալ 99 լաւ կողմ ունեցողին՝ մի թեթև վատ կողմ ունենալու համար՝ պատժել. դա կը լինի անարդարութիւն, այս պատճառաւ ներում եմ քեզ մի վատ կողմիդ հանդէպ 99 լաւ կողմ ունենալուդ համար, ազատ ես, գնա խաղաղութեամբ և ապրիր հանգիստ:

Եսէբի.

Ծնկաչոք գոհութիւն մատուցանելով Զեր մեծութեանը, այսուհետև ես՝ միշտ և անմոռաց օրհնող կը լինիմ Զեզ և Զեր կայսերական արքունիքին:

Բ. ՊԱՏԿԵՐ.

(Կայսր և Փիլիպոս, մեծատունի դատը)

Կայսր.

Սպասաւոր ներս բեր քրիստոնեաց մեծատունին:

(Ներս է բերում մեծատունին)

Սպասաւոր

Մեծ Կայսր, ահա այն մեծատուն քրիստոնեան:

Կայսր.

Ոինսո, ես քեզ ճանաչում եմ և գիտեմ, որ դումնեծ հարստութիւն ունիս, այդ ինձ քաջ յայտնի է, բայց կամենում եմ այս իմանալ, թէ դու ի՞նչ հաւատ ունիս, մեր փառապանծ աստուածներն ես պաշտում թէ քրիստոնեաների խաչուած Աստուածը:

Ոինսո.

Մեծ Կայսր, ես թէկ ունիմ քրիստոնեաների հաւատը՝ որովհետև քրիստոնեայ ծնողներից եմ ծնուած, բայց մինչև օրս գաղափար չունիմ մեր հաւատքի մասին և չեմ էլ ուզեցել ուշադրութիւն դարձնել, կամենում էք ուղիղն իմանալ՝ իմ պաշտածը միշտ եղել է և է իմ հարստութիւնը՝ քան իմ Աստուածն, իմ ուղիները՝ քան իմ ազգն և իմ եկեղեցին:

Կայսր.

Ոինսո, չէ կարելի ասել թէ՝ ես գաղափար չունիմ հաւատքի մասին, ուրեմն քեզ ով է տուել մեծ հարստութիւնը՝ որ դու ունիս, ոչ ապաքէն աստուածներն, ուստի պարտաւոր ես՝ քեզ կեանք և հարըստութիւն տուողի մասին հետաքրքրուիլ, ճանաչել և հաւատալ, և քո երախտագիտութիւնը յայտնելու համար՝ զոհերով երկրագութիւն մատուցանել:

Ոինոս.

Մեծ Կայսր, եթէ ես պաշտեմ քրիստոնեաների հաւատը և կամ ձեր հաւատը, իմ ունեցած հաւատքի դանագանութիւնը ի՞նչ օգուտ կամ վսաս կարող է տալ Ձեր կայսերական մեծութեանը և ազգին, աւելի լաւ չէ, մարդկանց և ազգերին ազատութիւն տաք՝ որ հաւատն ուզենան՝ այն հաւատը պաշտեն, միայն ունենան անկեղծ հաւատարմութիւն և անձնանուէր հնագանդութիւն կայսերական իշխանութեանը:

Կայսր.

Ոինոս, հաւատքը մարդուս սրտի մէջ սէր է բորբոքում սիրել այն ազգը և այն ժողովուրդը՝ որի հաւատն ունի, մարդս՝ որ ազգին էլ պատկանի՝ միայն հաւատը կարող է ձուլել նորան այն ազգի հետ՝ որի հաւատն ունի. որովհետեւ մարդս միայն այն հաւատքի համոզմունքով է կարող առաջնորդուիլ և նորա թելադրութեամբն միութիւն կազմել՝ որ և է ազգի հետ, ուստի ասա ինձ, որ ազգի հաւատն ունիս, մեր՝ թէ քրիստոնեաներինը:

Ոինոս.

Մեծ Կայսր, թէև քրիստոնեաների հաւատն ունիմ, բայց գլխաւորապէս կընդունեմ այն հաւատը և իլ պաշտեմ այն աստուածն՝ որ իմ հարստութեանը վսաս չի պատճառի:

Կայսր.

Ոինոս, եթէ քրիստոնեաների հաւատն ընդունես՝ այն ժամանակ պէտք է քո բոլոր հարստութիւնիցը ձեռք վեր առնես և կերպ-կերպ տանջանքներով պատժուիս, իսկ եթէ զոհես և պաշտես մեր աստուածներին՝ այն ժամանակ կարող ես ազատ և ուրախ վայելել քո ունեցած հարստութիւնը և աշխարհը իւր բոլոր շոայլութեամբ:

Ոինոս.

Մեծ Կայսր, քրիստոնեաների պաշտած Քրիստոսն ասում է «Ով որ կամենում է իմ յետեկիցը գալ, պէտք է թողնէ իւր հայրը, մայրը, կինը, որդիքը և բոլոր ունեցածները, և խաչն առնէ ուսին և իւր յետեկիցն գնալ» հէնց այս կէտն է՝ որ ինձ զզուեցնել է տալի քրիստոնեաների հաւատը. զարմանում եմ, ուրեմն էլ ինչու համար աշխարհ եկանք, երբոր աշխարհը չենք վայելելու, հոյակապ պալատներում չենք բնակուելու, համադամ խորոտիկներ՝ չենք ճաշակելու և ուրախարար նեկտարներ՝ չենք ըմպելու, չէ, ես այդպէս հաւատ չեմ ընդունում. ես չեմ թողնել իմ հարստութիւնը՝ ոչ ընտանիքս և ոչ աշխարհի վայելքը, այլ կը պաշտեմ այն աստուածը՝ որ թոյլ է տալի աշխարհը իւր լիութիւններովը ուրախ սրտով լի ու լի վայելել, այս պատճաններովը և իմ խորին համոզմունքով հաւատում եմ և խոնարհվում զոհել և երկիրպագանել ձեր աստուածներին ոսկեբաշխ Արա-

մազդին, ուրախարար Բաքոսին և չքնաղագեղ Անահիտին:

Կայսր.

Կեցցես դու Ռինոս. այժմ դու կը վայելես իմ
բոլոր յարգանքը, որովհետեւ, այսօր դու բարի օրի-
նակ դարձար և քո խորհրդաւոր դարձովը՝ մեր աս-
տուածներին ուրախացրիր, նորանք էլ քեզ և քո ըն-
տանիքը միշտ ուրախ և հարուստ կը պահեն, ուստի
գնա և այսուհետեւ բոլոր կողմից էլ ապահով եղիր:

(Ռինոսը երկրպագում և գնում է)

Գ. ՊԱՏԿԵՐ.

(Երրորդ դաւա. Կայսրը և Փիլիպոսը)

Սպասարք,

Մեծ Կայսր, ոստիկանապետն եկել և կամենում
է տեսնել Զեր Մեծութեանը:

Կայսր.

Թռող ներս գայ:

Ոստիկանապետ.

Ողջոյն քեզ Մեծ Կայսր:

Կայսր.

Բարի եկիր, ի՞նչ ունիք պատմեցէք:

Ոստիկանապետ.

Մեծ Կայսր, երկու քրիստոնեայ եմ բերել, որ
նորանց պատժի վերջնական վճիռը ինքներդ քննե-
լուց յետոյ որոշէք:

Կայսր.

Այդ քրիստոնեաներն ի՞նչ մարդիկ և որոնք են:

Ոստիկանապետ.

Առաջինը՝ Հռովմի պարծանք միլիարդների տէր
Ռոբերտն է, միւսը կօշկակար Ռեմմենը:

Կայսր.

Դորանց յանցանքն ի՞նչ է:

Ոստիկանապետ.

Երկուսի յանցանքն էլ քրիստոնէութիւն ընդու-
նելն է:

Կայսր.

Իշխան Փիլիպպիս, սա մի յաջող դէպք է, որով
դու աւելի պաշար կունենաս՝ այսպիսի դատերը վարժ
վարելու մէջ. և ահա այժմ Ռոբերդի առաջ պէտք է
Ռեմանին դատեմ, որ Ռոբերտը սարսափ զգայ և
քրիստոնէութիւնը թողնէ. ուստի ոստիկանապետ եր-
կուքին էլ ներս բեր:

(Երկուսին էլ ներս է տանում)

Ոստիկանապետ

Մեծ Կայսր, ահա այս երկուքն են՝ որ թողել են
մեր լոյս հաւատը և ընդունել քրիստոնէութիւն:

(Կայսրը Ռիմանին)

Կայսր.

Ուրացեալ դու, յառաջ արի, մըտեղացի ես, ի՞նչ
է անունդ և ի՞նչ հաւատ ունիս:

Ռիման.

Մեծ Կայսր, Հռովմիցն եմ, անունս Ռիման է,
հաւատս քրիստոնեաների սուրբ և ճշմարիտ հաւատն է:

Կայսր.

Դու անարդ մարդ, կին և որդիք ունիս և քա-
նիսը:

Ռիման.

Ես ունիմ մի կին, երկու տղայ և երեք աղջիկ:

Կայսր.

Միթէ նորանք էլ քեզ հետ ընդունել են քրիս-
տոնէութիւն:

Ռիման.

Այն, նորանք էլ ինձ հետ ընդունել են քրիստո-
նէութիւն և պաշտում են այն Խաչուածին՝ որը մեր
լոյս Հաւատն է, մեր մաքուր Սէրն է, և մեր յաւի-
տենական կեանքի երջանկութեան Յոյսն է:

Կայսր.

Ոստիկանապետ, այս իսկ բողէին գնա, և այս
ուրացեալի կնոջը, որդիքիներին և աղջիկներին բեր
այստեղ, իսկ սորան բանտարկիր:

(Գնում և բերում է)

Ոստիկանապետ.

Մեծ Կայսր, Ռեմանին բանտարկեցի, իսկ նորա
կնոջը և որդւոցը բերել եմ:

Կայսր.

Նորանց ներս բեր:

Ոստիկանապետ.

Մեծ Կայսր, ահա սորանք են Ռիմանի կինը և
դաւակները:

Կայսր.

Տիկին, ի՞նչ է անունդ և կոչումդ:

Տիկին.

Անունս Ռուհի է, կոչումս քրիստոնեայ:

Կայսր.

Ռիմանը քո բնչն է:

Ռուհի.

Ռիմանն իմ ամուսինն է:

Կայսր.

Ուրեմն լսիր տիկին Ռուհի, քո ամուսին Ռիմանը՝ որ ուրացել էր մեր սուրբ հաւատը, նա իւր սխալը ճանաշելով վերադարձաւ և կրկին ընդունեց մեր սուրբ հաւատը, ուստի նորան տուի բարձր պաշտօն, եթէ դու էլ հետեւս նորան և ուրանաս Խաչուած Հրէային, այն ժամանակ դու կը լինիս նորա հարազատ կինը և զաւակներովդ նորա հետ կը վայելէք իմ առանձին և լիառատ պարգևաբաշխութիւնը, իսկ հակառակ դէպքումը՝ կընդունէք չարաչար տանջանքներով դառնագին մահ:

Ռուհի.

Մեծ Կայսր, իրաւի՞ եթէ Ռիմանն ուրացել է մեր Փրկիչ Յիսուսին՝ ես էլ այժմ և եթ ուրանում եմ նորան, նա՝ այլևս իմ ամուսինը չէ. նա՝ այժմ մի փառած անդամ է, նորա նմանների համար՝ մեր Փրկիչն ասում է «Եթէ քո աջ աչքը քեզ գայթագեցնէ կարիր և հեռացրու քեզանից» այս սուրբ պատուէրի համաձայն՝ ես այսօրուանից նորան ին-

ձանից կտրած և հեռացրած եմ համարում, որովհետեւ մեր ճշմարիտ հաւատն ուրացել է. ես քրիստոնեայ եմ՝ նա դարձել է կրապաշտ. այսուհետեւ անհնարին է գառին՝ գայլի հետ ապրիլ. իսկ պարզեաբաշխութեան համար ուրացութիւնը՝ կը համարիմ ինձ ամենաղառն նախատինք և զզուելի կեանք:

Կայսր.

Ռուհի, ինսայիր քո երիտասարդ առոյդ հասակին և քո գեղեցիկ զաւակներին, որովհետեւ եթէ չը դառնաս և չընդունես մեր ճշմարիտ հաւատը. երդվում եմ մեր մեծ Արամազդի անունովը՝ որ քեզ և քո զաւակներին մասը-մասը կտրատելով շներին կերակուր կը տամ:

Ռուհի.

Մեծ Կայսր, եթէ մեզ այդպիսի և դորանից էլ աւելի դառնագոյն տանջանքներ տաք և այնպէս մեռցնէք՝ մենք չենք վախենալ՝ մանաւանդ մենք մեզ այն ժամանակ կը համարինք ամենաերջանիկ, ուրէք՝ երանի կը լինէք շուտով ինձ և զաւակներիս արժանացնէիք մեր այդ ցանկալի բաղձանքին:

Կայսր.

Դահճապետ, սորանց երկաթի շղթաներով պինդ կապիր ու տար մահապարտների մութը բանտը. և շուտով պատրաստիր դառնագոյն տանջանքների գործիքը՝ դորանց վաղը տանջելու համար:

Դահճապետ.

Ուրացեալ Ռուհի, դու երբոր զաւակներովդ
թողիք և ընդունեցիք քրիստոնեաների խաւար հա-
ւատը, ուրեմն մտէք այս խաւար բանտը և ճաշակե-
ցէք ձեր մոլար հաւատքի քաղցրութիւնը:

Դ. ՊԱՏԿԵՐ.

(Կայսրը, Փիլիպպոսը և Ռոբերտի դատը)

Կայսր.

Իշխան Ռոբերտ, այս ի՞նչ է՝ որ լսում եմ քո
մասին. միթէ դու էլ ընդունել ես քրիստոնէութիւն:

Ռոբերտ.

Մեծ Կայսր, այն ընդունել եմ քրիստոնէութիւն՝
որ այսուհետեւ աւելի հաւատարմութեամբ և պարտա-
ճանաչութեամբ ծառայեմ, առաջ՝ իմ ճշմարիդ Աս-
տուծոյն, յետոյ՝ Ձեր մեծութեանը և ապա՝ ազգիս
բազմաւասակ պէտքերին:

Կայսր.

Դու ի՞նչպէս կարող ես հաւատարմութեամբ ինձ
ծառայել, երբոր դու օտար Աստուծած ես պաշտում
հակառակ մեր ճշմարիտ հաւատքի օրէնքներին:

Ռոբերտ.

Մեծ Կայսր, քրիստոնէական հաւատքը՝ ոչ մի
կէտում չի թոյլատրում որ և է մէկին՝ մի աւագի հա-

տի չափ անհաւատարմութիւն և կեղծիք գործ դնել
թէ իշխանութեան և թէ որ և է անձի դէմ. որովհե-
տեւ մեր հաւատքի ոգին հրամայում է ունենալ անկեղծ
մէր՝ առ բոլոր մարդկութիւնը և հաւատարիմ ծառա-
յութիւն՝ առ իշխանութիւնը:

Կայսր.

Ռոբերտ, ձեր հաւատքի ոգին՝ ուրիշ ի՞նչ է հրա-
մայում, բոլորը սառւզութեամբ պատմիր:

Ռոբերտ.

Մեր հաւատքի ոգին՝ ինչպէս ասացի, հրամայում
է մեզ. մեր բոլոր սրտով սիրել ճշմարիտ Աստուծոյն,
նորանից յետոյ սիրել անխտիր բոլոր մարդկութիւնը,
այլև պատուիրում է տղաներին՝ պատուել իրանց ծը-
նողներին. հպատակներին՝ հնազանդ լինիլ իրանց իշ-
խանութեանը. ծառաներին՝ անսխալ կատարել իրանց
տէրերի պատուերը, խոտիւ հրամայում է՝ որ չըսպա-
նեն, չը գողանան, չը խաբեն, չը ցանկան զրացինե-
րի ունեցածներին, չը վկայեն սուտ, չը երդուին, լի-
նին հեզ, արդար, անմեղ, սուրբ և մաքուր. ահա
այս է մեր հաւատի ոգին:

Կայսր.

Ռոբերտ, թէև ձեր հաւատի ոգու դէմ չեմ գըտ-
նում ոչ մի վնասակար կէտ՝ միայն այս կայ՝ որ հա-
ւատքի տարբերութիւնը լինում է ազգի մէջ բաժան-
ման և խորթութեան պատճառ, ուստի բոլոր ժողո-

— 36 —

վուրդը մի միութիւն կազմելու համար՝ պէտք է ու-
նենանք մէկ հաւատ:

Ուղեւրտ.

Մեծ Կայսր, եթէ բոլոր մարդկանց կերպարանքը
մէկ լինէին՝ այն ժամանակ կը կորչէր տարբեր տար-
բեր գեղեցկութիւնների պայծառափայլութիւնը. եթէ
ծաղիկները բոլորը մէկ կերպ և մէկ գոյն ունենա-
յին՝ այն ժամանակ չէին ունենալ այն գոյնզգոյն և
հիանալի գեղեցկութիւնները, այսպէս էլ զանազանա-
կերպ գոյներն են, որոնց ամէն մէկն իրանց որոշ
տեղերումը փայլեցնում են հրաշալի գեղեցկութիւն,
սպիտակը՝ դէմքի վերայ, կարմիրը՝ այտերի և շր-
թունքների վերայ, սեր՝ յօնքերի և աշքի վերայ, ահա
այսպէս էլ տարբեր-տարբեր լեզուները և կրօնները՝
տարբեր-տարբեր ազգերին տալիս են իրանց գեղեց-
կութիւնները. ուստի ով մեծ Կայսր, ազգերին տնտր
ազատութիւն՝ բոլորն էլ իրանց ազգային լեզուով և
կրօնով պաշտեն իրանց ազատ համոզմունքով ճանա-
չած Աստուածը. նորանցից պահանջիր մի միայն ան-
կեղծ հաւատարմութեամբ հպատակութիւն կայսերա-
կան իշխանութեանը և անխարդախ հնազանդութիւն
քաղաքական օրէնքներին:

Կայսր.

Ուղեւրտ, հպատակները պէտք է ունենան կոյր
հնազանդութիւն և նոյն իսկ այս կոյր հնազանդու-
թեան վերայ էլ հաստատուած են իշխանութիւնները,

ուստի պէտք է քո իշխանութեան սուտը՝ սեր և խա-
ւարը՝ աւելի սիրով ընդունես և պաշտե՝ քան խա-
բեբանների ձշմարիար, սպիտակը և լիալոյսը:

Ուղեւրտ.

Մեծ Կայսր, կուրօրէն հնազանդութիւնը իրանց
տէրերին՝ կունենան միմիայն անբան կենդանիներն,
իսկ բանական և անմահ հոգի ունեցողը՝ չի կարող
սեին՝ սպիտակ ասել, և սպիտակին՝ սև, այսուամե-
նայնիւ այդ հնազանդութիւնը՝ բայց ոչ կուրօրէն՝,
կարելի է ունենալ օրինաւոր և արդար սկզբունք ու-
նեցող իշխանութեանը՝ այն էլ միայն քաղաքական
օրէնքներումը, իսկ հոգեւորական օրէնքներումը հնա-
զանդվում եմ մեր Փրկիչ Յիսուսի պատուէրներին:

Կայսր.

Եթէ այդպէս է, և ինչպէս էլ երեսում է, որ զու
չես թողնելու քրիստոնէական մոլար հաւատը և չես
կամենում պաշտել և զոհել մեր աստուածներին, ու-
րեմն հաստատ իմացիր, որ այսօր և եթ քո միմիարդ-
ների բարձրացած հարստութիւնը՝ բոլորը կը գըաւուին
արքունի գանձարանի օգտին, իսկ զու և քո զաւակ-
ները շղթայակապ կը տարուիք մահապարտների խա-
ւար բանդը՝ որ վազը հրամանիս համաձայն բոլորիդ
էլ անօրինակ տանջանքներով մեռցնեն և ձեր դիակ-
ները՝ շներին կերակուր տան:

Ուղեւրտ.

Մեծ Կայսր, զարմանալի է ձեր արարքը, արդեօք

ինչ յանցանք գտաք ճշմարիտ Աստուծոյ ծառաներիս
վերայ՝ որ կամենում էք չարաշար տանջել, մի՛թէ
յանցանք է պաշտել այն կենդանի Աստուծոյն՝
որ հրամայում է հնազանդ լինել մարմաւոր տէրերին
և նորանց հաւատարմութեամբ ծառայել: Ապշում եմ
ձեր մոլորութեան վերայ՝ որ անխօս կուռքերի հա-
մար՝ չէք կամենում ճանաչել կենդանի Աստուծոյն՝
բոլոր արարածների Արարչին, թող կորչին այն աս-
տուածներն՝ որոնք չեն ստեղծել երկինքն ու եր-
կիրը, իսկ այդ ձեր յիշած հարստութիւնը՝ Աստուածն
է ինձ տուել՝ իմ արդար աշխատանքով և այն էլ չէ
թէ գործ դնելու իմ մոլի բաղձանքներին յագեցումն
տալու համար, այլ նա ինձ հաշւով տուել է և մի օր
էլ ինձանից վերջին կոպէկն անդամ հաշւով պահան-
ջելու է, պարզն ասած, Աստուածն կարգել է ինձ
սեղանաւոր և ծախսարար այդ մեծ հարստութեանս
վերայ, որ առանց խտրութեան ազգի և կրօնի՝ գործ
դնեմ կարօտեալների անհրաժեշտ պէտքերը հոգա-
լու համար, և որովհետև դուք այժմ կամենում էք
բոլորը գրաւել, այդ մասին՝ ես ուրախ եմ, որ այդ-
պէսով բեռիս ծանրութիւնը վերցնում էք և
ինձ ազատում հաշուէտութիւնից: Իսկ ինձ, կնոջս և
գաւակներիս՝ որքան դառն տանջանքներով տանջէք՝
չէք կարող մեր Փրկիչ Յիսուսիցը հեռացնել՝ այդ ան-
հնարին է, այդ կէտումը՝ ձեզ արդէն յաղթուած հա-
մարեցէք:

Կայսր.

Դահճապետ, սորան տար մահապարտների մութն
ու խաւար բանդը.

Բ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ՊԱՏԿԵՐ.

Կայսր.

(Կայսր և Փիլիպպոս)

Իշխան Փիլիպպոս, արդեօք ինչ գաղափար կազ-
մեցիր քահանայի հաստատամտութեան, ուրացեալի
աշխարհասիրութեան և վերջիններիս անձնուրացու-
թեանց վերաբերութեամբ:

Փիլիպպոս.

Մեծ Կայսր, այն առաջի մեծատան ուրացու-
թիւնը համարում եմ արդիւնք ազահութեան և ար-
ծաթամոլութեան, իսկ քահանայի և միւս երկու ան-
ձերի հաստատամտութեանց վերայ և համոզեցուցիչ
ու փաստացի պատասխանների վերայ՝ մնացել եմ հի-
ացած:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս, ես ևս գտնվում եմ հիացման
մէջ և բոլորովին զարմանում, թէ արդեօք քրիստոնեա-
ների կրօնը ինչ վնաս և ինչ չարութիւն կարող է
հասցնել մեր կայսերութեանը, քանի որ նորանց կը-
րօնի ողին մաքուր սէր է առ Աստուածն, անխար-

դախ հնազանդութիւն և գովանի հաւատարմութիւն
առ կայսերական իշխանութիւնը և անկեղծ եղբայրու-
թիւն՝ անխտիք առ բոլոր մարդկութիւնը, մի այսպի-
սի բարիքների առաւելութիւններ ունեցող կրօնքից
չէ կարելի յուսալ չարիք, քննեցէք և տեսէք թէ ար-
դեօք կարմղ էք գտել մի որ և է մոլութիւն՝ որ ալդ
կրօնը չարհամարհէ, կամ որ և է առաքինութիւն՝ որ
չը սիրէ և չը պարտաւորեցնէ սիրել ու կատարել.
Ես որքան այդ կրօնը շրջարջում եմ նորա բոլոր կող-
մերն էլ գտնում եմ գերազանց գովութեանց արժա-
նիք ունեցող. ուստի ես անտեղի եմ համարում
քրիստոնեաների կրօնը բոնաբարել:

Փիլիպպոս.

Մեծ կայսր, ձեր անսահման խելամտութեամբ
ըմբռնածը՝ ունի իւր մէջ ընդգրկած անհերքելի ճշշ-
մարտութիւն՝ որ կարող է ձեր աստուածային ան-
սխալ օրինադրութեամբ հեղեղել աշխարհի վերայ արե-
գակնային լիալոյս ճառագայթներ:

Կայսր.

Իշխան Փիլիպպոս, առ այժմ մտադիք եմ քրիս-
տոնէութիւնը չուրացող այն երկու բանտարկուածնե-
րին էլ ազատել, և յետոյ կարգադրել այս՝ որ այն
կրօնները՝ որոնց ոգին հակառակ չէ կայսերական իշ-
խանութեանը՝ և ազգերի եղբայրութեանը՝ կարող են
ազատ պաշտել իրանց հաւատը:

Փիլիպպոս.

Մեծ կայսր, ապշութիւն է ինձ պաշարում լսե-
լով աշխարհին կեանք և երջանկութիւն պարզեա-
բաշխող ձեր այդ աստուածային հոգուց բղխած հրա-
մանը՝ որ ազգերին պատճառելու է ողեպարար ուրա-
խութիւն և անկեղծ սէր և հաւատարմութիւն իշխա-
նութեանը:

Կայսր.

Ոստիկանապետ, գնա և շուտով այստեղ բեր այն
երկու բանտարկուածներին, նոյնպէս այն Ռուսի կը-
նոջը և զաւակներին:

(Գնում և բերում է)

Ոստիկանապետ.

Մեծ կայսր, ահա սորանք են այն բանտար-
կուածներն:

Կայսր.

Ռոբերտ, Ռեման և Ռուսի քննեցի ձեր կրօնը՝
նորա մէջ չը գտայ որ և է չարութիւն, ուստի բոլո-
րիդ էլ ազատում եմ պատժից, գնացէք և ձեր ըն-
տանիքով ազատ պաշտեցէք ձեր քրիստոնէական կը-
րօնը, միայն համեստութեամբ, որ մեր քուրմերին չը
տաք դրգիռ բոլոք բարձրացնելու:

Բանտարկուածներ.

Մեծ կայսր, մեր սրտագին շնորհակալութիւնը
յայտնելով ձեր մեծութեանը, աւելացնում ենք՝ որ
մենք ընդ միշտ աղօթող կը լինինք ձեր կայսերական
թանկագին կեանքի երկարութեան համար և միշտ

կունենանք մեր հաւատքի ոգուն համապատասխան՝
համեստ կեանք և ընդհանուրին շահաբեր գործքեր:
(Քնում են)

(Կայսրը և Փիլիպպոս)
Կայսր.

Իշխան Փիլիպպոս, այս բոլորից յետոյ՝ վերջապէս, ես քեզ կարգում եմ փոխարքայ Եգիպտոսի վերայ. ուստի պէտք է աշխատիս իմաստունների լուսաշաւիղ ճանապարհներովը առաջ գնալ. իշխանը պէտք է մէկ ձեռքն ունենայ իշխանական գաւագանը՝ միւս ձեռքը սիրոյ և խաղաղութեան ձիթենին. Այս իշխանը՝ որ չի կարում իշխել իւր կրքերին՝ նա չի կարող իշխել ժողովրդին. իւր վատ ունակութիւններին իշխողը՝ կը տանի յաղթութիւններից մեծագոյնը. իշխանը՝ պէտք է մօտիցը քսումներին հեռացնէ. արժանաւորներին յառաջ քաշէ, լաւ իշխանը պէտք է ի՞նկատի ունենայ՝ որ ինքը մարդկանց է իշխում՝ օրէնքի լծի տակ և միշտ իշխելու չէ, բայց ցաւալին այն է՝ երբոր վատերը լաւերին են իշխում, իսկ աւելի ցաւալին՝ տպէտները իմաստուններին. Լաւ և իմաստուն իշխանը ժողովրդի համար՝ կեանք և բարութիւնների աղքիւր է և աշխարհին երջանկութեան պսակ:

Վերջապէս, պատուիրում եմ քեզ՝ որ քրիստոնեութիւն ընդունողների դատերի մէջ ընթանաս իմ ընթացած ճանապարհովը, այլև կաշխատիս մեր քուրմերի վիճակները լի ապահով և միշտ պատուաւոր գիրքի վերայ պահել. ուստի տալիս եմ քեզ լիակատար իրաւունք, որ Եգիպտական բոլոր ազգերին լինիս առաւելապէս որպէս հայր՝ իւր որդւոց վերայ,

քան որպէս իշխան՝ հպատակների. և միշտ գուն գործես հասկացնել ժողովրդին հաւատարմութեամբ ծառայելու Հոռվմէական իշխանութեանը. ուրեմն գնախաղաղութեամբ մեր աստուածներն լինին քեզ օգնական:

Փիլիպպոս.

Մեծ Կայսր, խոստանում եմ, ձեր մեծութեան իմաստալիք հրամայածները ճշդութեամբ կատարել, ուստի միամիտ եղէք, աստուածների օրհնութիւններով էլ լիայոյս, և կացէք խաղաղութեամբ:

Բ. ՊԱՏԿԵՐ.

Փիլիպպոս.

(Փիլիպպոսը Եգիպտոսում)

Եգիպտոսի ազնուազարմ իշխաններ, և յարգելի ժողովականներ, նորին մեծութիւն Օգոստավառ կայսեր հրամանով կարգուեցայ Եգիպտոսի փոխարքայ. և այս պատճառաւ ես ինքս՝ Կղողիէ իշխանովովս, Աերգէ և Ապիտոն որդիներովս, Եւզինէ դստերովս և Պոռտոս ու Յակինդոս ներքինիներովս մեր մեծ Հոռվմից տեղափոխուել եմ այստեղ: Ասացի, որ ես ձեզ վերայ փոխարքայ եմ կարգուել, բայց այնպիսի փոխարքայ՝ որ ոչ որպէս իշխան իշխելու ձեզ՝ այլ որպէս հայր հոգալու ձեր կեանքի բարելաւութեան բոլոր հոգսերը, և գեղեցիկ ուղիներ բանալու ձեր պատուաւոր ապրուստի ապահովութեանը համար:

Այս պատճառաւ կամենում եմ կարձ կերպով յայտնել ձեզ իմ բաղձանքները: Արդ, Եգիպտոսը կազ-

մըկում է մի մեծ մարմին, և սորա անդամները տեղական զանազան ազգերն են՝ սորանից մէկը կազմում է աչքեր, միւսը՝ հոտոտելիք, մի ուրիշը՝ լըսելիք և մի ուրիշը՝ շօշափելիք և այլն. հարկաւ սորանցից ամեն մէկն իւր տեղումն ունի իւր որոշ գերազանց յատկութիւնը:

Այժմ այնպէս ասենք, եթէ ամբողջ մարմինը աչք լինէր՝ կամ լսելիք, կամ հոտոտելիք, կամ ձեռք և կամ ոտք. այն ժամանակ հաւասարաւթիւնը և միակերպաւթիւնը մարմնի կազմակերպաւթեանը այլանդակութիւն կը պատճառէր, այլ ամէն մի անդամիւր չափաւոր և որոշ զիրքերովը շքեղաւթիւն է տալի մարմնի կազմակերպաւթեանը և գեղեցկաւթեամբ աւելի փայլեցնում: Այս անդամները եթէ ունին իրանց առողջաւթիւնը՝ հետևապէս կանենան իրանց հիւանդութիւնը, ուստի մենք պէտք է ունենանք քաջանմատ և փորձառաւ բժիշկներ, որ գիտենան իւրաքանչիւր անդամի հիւանդաւթեան պատճառը և գեղը. պէտք է զիւտենան՝ որ ուրքի ցաւի գեղը՝ աչքի ցաւին պէտք չի դալ. և ոչ ձեռքի ցաւինը՝ ականջի ցաւին. այլ իւրաքանչիւր ցաւի բժշկաւթեանը հարկաւոր է ունենալ իրան յատկացեալ գեղը. ահա այսպիսի հմտավետը առողջ պահելով որոշ-որոշ անդամները՝ առողջ կը լինի ժողովրդական մարմնի ամբողջ կազմակերպաւթիւնը:

Ես՝ իմ ի' սրտէ բղխած համոզմանքովը թոյլաւում եմ, որ ամէն ազգ ունենայ իւր հաւատը, իւր ծէսը, իւր գրականութիւնը, ազատ պաշտէ իւր Աստուածը, ուսանի իւր ազգայինի հետ Պետական և Համաշխարհային լեզուն, և անսահման հաւատարմաւ-

թեամբ և իւր դիրքովը ծառայէ Պետական մեծամարմին կազմակերպաւթեանը. ահա և միայն այսպէս Եղիպտոսը կը լինի միշտ առողջ և միշտ խաղաղ ու ապահով:

Հաւատում եմ, որ ձեզ քաջ յայտնի պէտք է լինի այն՝ որ աշխարհիս ազգերի քաղաքակրթավայր լինը և նախանձելի յառաջաղիմութիւնը ծնունդ են առնում հանրաշահ բարեկարգաւթիւնից. որովհետեւ բարեկարգաւթիւնը մայրէ բոլոր առաքինութիւնների և հիմք ամեն մի հոյակապ հաստատութեան. և որքան այդ հիմքը ամրապինդ լինի՝ այնքան հաստատութիւնը շացոցիչ շքեղաւթեամբ կարտափայլի. իսկ եթէ հիմքը խախուտ լինի՝ այն ժամանակ աւելորդ է այն հաստատութեան արտաքին շքեղաւթիւնը, ուստի ինձ սեպահ պարտաւորութիւն եմ համարում Եղիպտոսի ժողովրդի ապահովաթեան ու յառաջաղիմութեանը համար նախագծել գեղեցիկ բարեկարգաւթիւն, որ բոլորն էլ այդ նախագծի շաւիղով ընթանալով՝ ունենան իրանց դասակարգաւթիւնների և վիճակների համեմատ կեանքի, գոյքի և պատուի ապահովաւթիւն, քաղցրաւթիւն և վայելչութիւն:

Ա. Ես կամենում եմ, որ Եղիպտոսի մէջ բոլոր ազգերի համար բացախն բազմաթիւ ուսումնարաններ, և զանազանակերպ արհեստանոցներ, որ չը զտնուին անգործներ և թափառաշրջիկներ՝ այլ բոլորն էլ ունենան իրանց արհեստը և զբաղմանքը. և այս պատճառաւ պէտք է որ բոլորն էլ սկսած պալատականներից մինչև վերջին կօշկակարը՝ վերաները ունենան իրանց

յատկացեալ նշանազգեստը՝ որով ճամաչուին նորանց արհեստը և զբաղմունքը:

Բ. Ընտանիքների մէջ խարսթիւն չը լինելու պատճառաւ՝ աղջիկը որ ազգի տունը հարս գնայ՝ պարտաւոր է այն ազգի հաւատն անենալիւր ապագայ զաւակներովը հանդերձ:

Գ. Ամենայն խստաթեամբ որդիներն պէտք է անենան ծնողներին սէր. հնագանդութիւն և յարգանք փոքրերը՝ մեծերին. ազգերը և ժողովարդներն իրար, և զինուորներն իրանց հրամանատարներին:

Դ. Դատաւորները չը պէտք է ի' նկատի անենան դատի ժամանակ ազգ, տոհմ և աստիճան, այլ օրէնքի առաջ՝ խստիւ պահպանութիւն հաւասարութեան և յանցաւորի անցեալի համեմատութեամբ՝ վը-ձիո պատժի:

Ե. Արժանաւորի առաջ չը գնել ոչ մի արգելք, այլ նորա առաջ բանալ յառաջադիմելու լայն ասպարէզ,

Զ. Դատաւորները պատուի և պատժի դէպքումը չը պէտք է լինին վաղվաղկոտ, որ չենթարկուին որ-խալանքի և ապաշաւի. և պէտք է չը սիրեն խրնամութեան անարդարութիւնը՝ որը սև մուր սփոռող է նորանց երեսին. և յաւիտենական դատապարտութեան ամօթալի կնիք նորանց ճակատին:

Է. Բոլոր կարգի վաճառակաները, քուրմերը, բը-ժիշները, ակնաբոյժները, ատամնաբոյժները, արհեստաւորները մանաւանդ հացի, շորեղէնների, կօշիկների և վառելիքի վաճառքները պէտք է ունենան իշխառնթիւնիցը ամենայն բարեխզդութեամբ հաստատուած սակագին, որ ագաները ժողովրդին չը ծառայեցնեն

իրանց կամայականութեանց:

Ը. Ճանապարհները պէտք է ապահով լինին աւազակներից, քաղաքները և գիւղերը՝ գողերից. և ժողովուրդը գրպանահատերից և արբեցողներից:

Թ. Գիւղացիներին պէտք է ամեն կերպ օգնել, որ երկրագործաթիւնը ծաղկի, ուստի տալ նորանց հարկ եղած բոլոր դիւրութիւններ, որ տանջուելուց ազատ լինին:

Ժ. Հողը չը պէտք է վաճառուի, այլ իւրաքանչիւր ընտանիքի համար նշանակուի որոշեալ քանակութեամբ հողաբաժին. և այն էլ սկսած մի տարեկանից անդամների թուերի համահաւասար:

ԺԱ. Եգիպտական ազգերի մէջ ստրկութիւն չը պէտք է յիշափի, այլ բոլոր ազգերն ազատ են և հըպատակ միմիայն կայսեր:

ԺԲ. Հպատակներին հարկից ազատ անելու փոխարէն՝ հողից գարս եկած գանազանակերպ հանգերը, նաւթը, ոսկին, արծաթը, երկաթը, պղինձը և այլն, բոլորն էլ կը լինին կայսերական գանձարանին սեպհականութիւն. և սորանք շահագործելու համար՝ կապալով կը տրախին ժողովրդին:

ԺԳ. Պատիժ—Արիւն թափողի՝ թափել արիւնը, գողի՝ կտրել մատը, աչքը հանողի՝ հանել աչքը, ատամը հանողի՝ հանել ատամը, վերջապէս յանցանքի համեմատի հանել մատը և ծանրութեանը հաւասար՝ տալ համապատասխան պատիժ, բայց ճիշդ և արդարութեամբ քննելուց յետոյ, որ ժողովարդը խաղաղ, ապահով և հանգիստ կեանք վարէ:

Ահա այս 13 յողուած պատահներին անսխալ

կատարման վերաբերութեամբ պէտք է կարգախն արդար և իրաւասէր մարդկանցից վերահսկողներ՝ և որոնց թուլաթիւնը և կաշառկերաթեամբ զանցառաթիւնը՝ ձիշը ստուգելուց յետոյ՝ յանցաւոր գտնուածներին՝ պէտք է գնդակահարեն, իսկ արդարաթեամբ ծառայողներին առաստ պարզեատրեն և տարեց տարի աստիճանը բարձրացնեն:

Արդ, այսպէս և սորանից էլ աւելին գեղեցիկ բարեկարգութեամբ բապահովելով Եգիպտոսը՝ կամենում եմ նորան նոր շունչ և նոր ոգի ներշնչել, և այսու ամենայնիւ առ այժմ ցտեսութիւն:

Ժողովականներ.

Կեցցէ, կեցցէ մեր փոխարքայ Փիլիպոսը կեցցէ ընդ միշտ Եգիպտոսի փառքի և պայծառութեամնը համար:

Գ. ՊԱՏԿԵՐ.

Եւզինէն և ընկերուհիները Մարգարիտը և Սաթենիկը:

Եւզինէ.

Մարգարիտ և Սաթենիկ սիրելի ընկերուհիներ, բարի եկիք մեր տուն, չընայելով՝ որ ես սիրեցի Եգիպտոսը և Եգիպտուհիներին, սակայն հակառակիպէս իմ սիրած Եգիպտուհիներից ոչ մէկն էլ չի յաճախում մեր կրատունը, որտեղ մեր աստուածներիներկայութեամբ աւելի անկեղծ սիրով կապուինք. չը զիտեմ պատմառն ինչ է:

Մարգարիտ.

Իշխանուհի Եւզինէ, այս երկու երիտասարդներն ինչ մարդիկ են:

Եւզինէ.

Սորանք իմ ներքինիներն և իմ ամենահաւատարիմ ծառաներն են, կարող էք սորանց ներկայութեամնը ազատ ասել և խօսիլ:

Մարգարիտ.

Զեր կոատուն չը գալու պատճառը այն է՝ որ մենք քրիստոնեայ ենք և պաշտում ենք երկինք և երկիր ստեղծող ձշմարիտ Աստուծոյն, իսկ դուք կոապաշտ էք, ձեր ձեռքովը շինում էք կուռք և յետոյ ձեր ձեռքովը շինածին ասում էք սա մեր աստուածն է. Երկրպագում էք նորան՝ և ինդուած անում նորանից. Եթէ նորանց զետանի վերայ պառկեցնէք՝ նորանք չեն կարող կանգնիլ, ուրեմն էլ ինչու աստուածներ են՝ երբոր իրանք իրանց չեն կարող օգնել՝ ինչպէս կարող են ուրիշին օգնել:

Եւզինէ.

Սիրելի քոյրերս ձեր պատմածը խելքիս մօտ եկաւ, ուստի յօժար սրտով կամենում եմ իմանալթէ ինչ է քրիստոնէութիւնը և ինչ է նորանց պաշտամունքը, որովհետեւ շատ անգամ տեսնում եմ, որ հօրս մօտ բերում են թէ այր և թէ կին և նոյն իսկ երկսեռի պատանիներ, բոլորն էլ տարօրինակ քաջասրտութեամբ, վստահ և համարձակ խոստովանում են

Իրանց քրիստոնեայ լինելը և անվախ յանձն են առանում ամենասոսկալի տանջանքներ այնպէս՝ որ կարծեսթէ այստեղ կեանքներին վերջ տալուն պէս՝ մտնելու են աշխարհիս բոլոր բարիքներով լի ու ճոխ և անմահաբոց երջանկութեանը մէջ, պէտք է այս էլ ասած՝ որ հայրս թէկ տաւած է հաւատքի ազատութիւն, սակայն կռապաշտ մեծամեծ պաշտօնեաներին և քուրմերին գոգոման տեղիք չը տալու համար՝ քրիստոնեաներին երբեմն-երբեմն խիստ և երբեմն թոյլ պատիժներով չարչարամ է, ուստի խնդրամ եմ՝ որ առանց մի կէտ թագյնելու անկեղծութեամբ պատմէք ինձ քրիստոնէութեան բոլոր գաղտնիքը:

Սաթենիկ.

Իշխանուհի Եւգինէ, եթէ ուղիղ սրտով հետաքրքրվամ ես տեղկանալ քրիստոնեաների հաւատքի մասին՝ երանի քեզ, որովհետեւ մեր Աստուծոյ սուրբ Հոգւոյ ազգեցաթիւնն է՝ որ քո սրտի մէջ զարթեցնամ է հետաքրքրութիւն, ուստի մենք էլ տրախ սրտով, անկեղծ հաւատով և մեծ յուսով կը պատմենք քեզ մերքրիստոնէական հաւատքի ճշմարտութիւնները:

Եւգինէ.

Սիրելի քոյրերս, աղաչում եմ ձեզ՝ վստահութեամբ պատմել ինձ ձեր հաւատքի ճշմարտութիւնները. և ես ամենայն սիրով ունկնդիր կը լինիմ և ըստ այնմ կընծայեմ հաւատ:

Մարգարիտ.

Իշխանուհի քոյրիկ, դու ինչպէս որ գէմքիդ տես-

քովը անհամեման և անհամեմատ գեղեցկուհի ես, նոյնպէս՝ էլ հոգւովդ անսահման առաւելութեամբ գեղեցկութիւն կունենամ՝ երբ մեր պատմելի ճշմարտութիւնները լսես ու հաւատաս:

Եւգինէ.

Սիրելի քոյրերս, դուք միամիտ կացէք, ես սիրում եմ ճշմարտութիւնը. ես չեմ կամենալ յամառութեամբ պաշտպան կանգնիլ սուտ կողմին և ստութեանը՝ այլ իմ բնածին հասկացողութեամբը կարող եմ ճշմարտութիւնը որոշել ստութիւնից և ընդմիշտ յարիլ ճշմարտութեանը:

Մարգարիտ.

Իշխանուհի քոյրիկ, ես քեզ ասացի, որ մենք քրիստոնեայ ենք, մենք պաշտում ենք այն ճշմարիտ Աստուծոյն՝ որ ստեղծել է բոլոր արարածներին և այս բոլորին էլ տուել է ոյժ և կարողութիւն՝ որ իւրաքանչյւրը անթերի կատարէ իւր վերայ գրած ծառայութիւնը. և բոլորն էլ անթերի կատարում են:

Եւգինէ.

Ինչից էք գիտում, որ ձեր Աստուծուն է ճշմարիտ Աստուծը:

Սաթենիկ.

Մեր Աստուծոյ գործքերիցն ենք գիտում, որ նա է միայն ճշմարիտ Աստուծը:

Եւզինէ.

Չեր ճշմարիտ Աստուծոյ գործքերը որհնք են:

Սաթենիկ.

Մեր ճշմարիտ Աստուծոյ գործքերն երկինքը,
երկիրը և բոլոր երկնային և երկրային արարածներն են:

Եւզինէ.

Ի՞նչպէս կարող էք ինձ հաւատացնել, որ եր-
կինքը, երկիրը և բոլոր արարածները Ճեր Աստուծոյ
գործքերն են:

Սաթենիկ.

Մենք կարող ենք հաւատացնել քեզ. առաջին՝
բնական քննութեամբ. տես ահա այս տունը և նոյն
իսկ այս քաղաքը իւր հրաշալի կերտուածներովը,
հակայ բուրգերովը և վիթխարի սփինքսներովը, ի
հարկէ չենք կարող ասել՝ որ իրանք իրանց եղած են,
այլ նորանց մարդկային հանձարն ու ձեռքն է հրաշա-
կերտել. ուրեմն ի՞նչպէս կարող ենք ասել, որ այս
իմաստուն խորհրդով ու սքանչելի կարգաւորութեամբ
հրաշակերտուած երկինքն ու երկիրը իրանք իրանց
եղած լինին. ուրեմն կայ մի ամենակարող ստեղծա-
գործող և նա է միայն ճշմարիտ Աստուածը:

Երկրորդ, տեսնում ենք, որ մարդիկ իրարից
ծնվում են, մենք ներկայ ծնուածից բարձրանանք
մինչև առաջին մարդը. նա ինքն իրան չէր կարող
ստեղծուիլ. եթէ ասենք, նա ծնաել է հողից, կամ
ջրից և կամ որ և է մի կենդանուց, այս կէտում դլ

կարող ենք ասել. որ հողը, ջուրը և կամ որ և է
կենդանին իրանց ծննդական սաղմը և բեղմաւորու-
թիւնը կարող էին ըստ սովորականին ընդ միշտ շա-
րունակել. ուրեմն կայ մի Ստեղծող՝ որ բոլորին
տուել է որոշ սեռի և որոշ տեսակի ծնունդ և նորա
շարունակութիւնը. ահա նա է մեր ճշմարիտ Աստ-
ուածը:

Եւ երրորդ, մենք գիտենք՝ որ աշխարհիս արե-
ելեան կողմումը գտնվում է «Եապոնիա» կոչուած
երկիրը, նորա Կայսրը և ժողովուրդը, իսկ մենք թէև
նորանց չենք տեսել՝ բայց հաւատում ենք, որ նորանք
կան, կարդալով նորանց տեսնողների գրածները և
պատմածները. այսպէս էլ մենք թէև մեր ճշմարիտ
Աստուծոյն չենք տեսել՝ բայց տեսնողների և հետը
խօսողների գրածները կարդալով իմանում ենք, որ
արդարև կայ մի անմահ, անկախ, և ամենակարող և
ամենազօր Արարիչ՝ և նա է մեր յաւիտենական ճշշ-
մարիտ Աստուածը:

Եւզինէ.

Բայց քոյրիկ, այս էլ են ասում թէ մարդիկ կա-
պիկներից են առաջ եկել, որովհետեւ նորանք շատ
նման են մարդկանց:

Սաթենիկ.

Զէ քոյրիկ, այդպէս չէ, այդ ասողներն այնքան
կարձամիտ են եղել, որ չեն կամեցել մի փոքր քննու-
թիւն անել, այն ժամանակ՝ իրանք և եթ կը կարո-
ղանային հակառակը պատասխանել:

Եւզինէ.

Քոյրիկ, այդ ծամր հարցին՝ ի՞նչպէս կարող էին
նոյն իսկ իրանք պատասխանել, շատ էլ քննութիւն
անէին:

Սաթենիկ.

Եւզինէ քոյրիկ, եթէ նորանք մի փոքր քննու-
թիւն անէին՝ ահա այսպէս էլ կը հասկանային և կը
պատասխանէին. այծն ու ոչխարը իրար շատ նման
են՝ այծը մըլլրկալով մայում է՝ ոչխարը պարզ կեր-
պով մայում է. եզն ու գոմէշը իրար նման են՝ եզը
բառաջում է գոմէշը մոնջում. էջն ու ձին էլ իրար
նման են, էշը զուում է ձին իրինջում. և այսպէս
շատ չորքոտանի կենդանիներ. թուչուններից էլ տառ-
րակն ու աղաւնին. հաւն ու հսդկահաւը. սագն ու
բադը և ուրիշ շատ թուչուններ. պտուղներից էլ ըն-
կոյդն ու կաղինը, սեին ու ձմերուկը, տանձն ու
խնձորը, սորանք բոլորն էլ թէկ իրար շատ նման են՝
բայց բոլորն էլ իրանց յատուկ և որոշ ցեղն ունին և
երբէք իրարից չեն առաջ եկել. այսպէս էլ մարդիկ
չեն առաջ եկել. որ և է մի կենդանուց, այլ ամենա-
բարձրեալ Աստուծոյ ձեռքովը ստեղծուած և նորա-
բանական և անմահ հոգւովը զարդարուած դրուած
են պատկ և թագաւոր բոլոր արարածների վերայ՝
որով անհուն հեռաւորութեամբ և բիւրակերպ արժա-
նիքներով գերազանցում են աշխարհիս բոլոր արարած-
ներից

Եւզինէ.

Քոյրիկ այնպէս էլ եմ լսել, որ ասում են. թէ

Աստուծ չկայ, հոգի չունինք, և ոչ էլ կայ հանդեր-
ձեալ կեանք, այս բոլորը շինծու և մարդկանց լծի
տակ դնելու համար՝ առասպելաբանութեամբ ստեղ-
ծագործուածներ են:

Սաթենիկ.

Արդարի կան մարդիկ, որ իրանց աշխարհամո-
լութեան տեսնչանքներին և չարագործութեան հա-
կումներին բաւականութիւն տալու համար՝ որ իրանց
չար գործքերը և անիրաւութիւնները տեսնող ու դա-
տող չը լինի և այսպէս իրանց խիզճը և իրանց
սիրուը ապահովացնելու համար՝ պնդում են թէ Աստ-
ուծ չըկայ, հոգի չունինք և ոչ էլ կայ հանդերձալ
կեանք. ահա այս կերպ անխտիր գործում են ամենա-
զագիր չարիքներ. որովետե իրանց գործքերը խաւա-
րի է և լոյսիցը աւելի սիրում են խաւարը:

Եւզինէ.

Արդեօք մեր անմահ հոգին ի՞նչ է:

Սաթենիկ.

Մեր անմահ հոգին իմանալի (իմանալի այն իրն
է՝ որ կարելի է միայն մտքով իմացուիլ) և անմարմին
լոյս է, որովհետեւ Աստուծոյ պատկեր և նմանութիւնն
ունի. և նորա լոյսի հաղորդակցութեամբը տեսնում
ենք և իմանում ամեն բան. ինչպէս որ արեի լոյսը
միանում է մեր աշքի լոյսի հետ և յետոյ տեսնում
ենք մեր առաջի բոլոր առարկաները, այնպէս էլ
Աստուծոյ անձառելի լոյսը միանում է մեր հոգու

լոյսի հետ և այնպէս տեսնում ենք և իմանում թէ երկնային և թէ երկրային բոլոր գիտութիւնները, քննում և զննում ենք ամեն բան և ստեղծագործում զանազանակերպ անթուելի հրաշքներ. ահա այս գերազանցութիւններն են՝ որ չունին աշխարհիս բոլոր արարածներն. ուստի բոլոր մարդիկ պէտք է Ս. Գիրքը շատ կարդան՝ որ ունենան կատարեալ հաւատ և կատարեալ գիտութիւն, որ ամեն մի թեթև հողմ փշելուց չը տատանուին և չը գլորուին: *)

Եւգինէ.

Արդեօք ո՞րն է Ս. Գիրքը, որ ճշմարիտ Աստուծոյ տեսնողներն են զրել:

Սաթենիկ.

Այդ Ս. Գիրքը չըէից չին ուխտի Ս. Գիրքն է, և նորա հետ կցած մեր Փրկիչ Յիսուսի նոր ուխտի

*) Անհաւատներն ասում են «Մարդու հոգին անմահ չէ, մարդու մեռնելու հետ՝ ամեն բան կը վերջանայ, թէ մի մարդ մեռնել է՝ թէ մի շուն մեռնել մէկ է, եթէ հոգին անմահ էլ լինի՝ և եթէ Աստուծած դատելու և վարձատրելու էլ լինի, բոլոր պատիժը պէտք է լինի՝ Աստուծոյ տեսութիւնից զրկուելը. և ոչ յաւիտեան անողորմ այրելու պատիժը»:

Կրօնի ճշմարտութիւնը ծաղրողների վերաբերութեամբ լինք մի քանի յայտնի փիլիսոփաների վկայութիւնները. փիլիսոփաների եմ ասում՝ որովհետու նորանք Աստուծաբանութիւնից բարձր են դասում փիլիսոփայութիւնը:

Եւրիպիդէս փիլիսոփան ասում է «Աստուծած ամեն բան տեսնում է, և ինքը ոչ մէկից չի տեսնվում»:

Պղատոնն ասում է «Ոչ արքարը և ոչ անքրաւը կը ծածկուին Աստուծոյ աչքից, որ մեր մտածածներն էլ տեսնում է»:

Սենեկա փիլիսոփան ասում է «Օգուտ չունի մեր խղճմտանքը ծածկելը՝ Աստուծած մեզ ճանաչում է»:

Ս. Աւետարանն է որ իմիասին կոչվում է Աստուծածաշունչ Ս. Գիրք:

Եւգինէ.

Ինչ որ ճշմարիտ Աստուծոյ, վերաբերութեամբ պատմեցիր՝ բոլորը խելքիս մօտիկ եկան. իսկ այժմ, որ յիշեցիր մեր Փրկիչ Յիսուսը, ով է ձեր Փրկիչ Յիսուսը:

Սաթենիկ.

Օրիորդ Մարգարիտ, այս կէտն էլ խնդրում եմ ինքդ բարեհաճիր կարճառօտ՝ բայց ամբողջը պատմել, որ մեր հաւատի բուն էական մասերի վերաբերութեամբ մեր սիրելի Եւգինէն ունենայ լիակատար տեղեկութիւն:

Մարգարիտ.

Ամենայն ուրախութեամբ յանձն եմ առնում պատ-

կիկերոնն ասում է «Ով որ Աստուծոյ օրէնքին չի ճնազանդուի, ծանը պատիժ կը գայ վերան»:

Պղատոնն ասում է «Աստուծոյ մօտիցը չի զատուի դանիճը, նաև գէշ խօսքերը պատմելու համար»:

Պայլ—անուանի փիլիսոփան ասում է «Աշխարհիս բոլոր կրօններն այսինքն ճշմարիտ և սուս կրօնները՝ այս մի մեծ ծխնիքի (ծխնի՝ զբուն ներքի ոտը) վերայ են պտտվում, այն էլ կայ մի աներեսլի զատաւոր՝ որ այս կեանքը վերջանալուց յետոյ պատժում է և վարձատրում մարդուս ներքին և արտաքին զործքերը»:

Սոկրատ մեծ փիլիսոփան ասում է «Խելքս այսպէս է վկայում և հաստատուն կը համարիմ, որ այս բանտից դուրս եկող բոլոր հոգիներն անմահ են. նորս համար պէտք է որ զու երջանիկ լինիս ո՞վ Աքսիսքոս, որովհետեւ լաւ և բարեպաշտ վարք ունեցար»:

Կիկերոն Հռոմէացի մեծ փիլիսոփան ասում է «Իմ միտքը միշտ այսպէս յենուած է, որ մեր հոգին չի կարող անմահ չը լինիլ»:

մել իսկ դու մեր պաշտելի Եւզինէ ուշադրութեամբ
լուր:

Եւզինէ.

Մարգարիտ քոյրէկ, զգում եմ՝ որ պատիս մէջ
արդէն սկսել է զարթնիլ հետաքրքրութիւն՝ ուստի
պատրաստ եմ ուշադրութեամբ լսել քո պատմելիքը:

Մարզարիտ.

Մեր Աստուածը անմահ է, յաւիտենական է,
ամենակարող է, ամենիմաստ է, իւր աթոռը թէն
երկնքումն է, բայց իւր զօրութեամբ ամեն տեղ է,
մեր Աստուածը մէկ է և երեք անձերի որոշմունք
ունի իւր մէջ Հայր, Որդի և Սուրբ Հոգի, այս երեք
անձերի միութիւնը՝ անբաժանելի մէկ Աստուածու-
թիւն է, և ոչ զատ-զատ Աստուած. իսկ թէ ի՞նչ է
այս երեք որոշմունքը և ի՞նչ է նորանց միութիւնը՝

Լուսիք անուանի ճանապարհորդն ասում է «Մարդկանց մէջ չէ
եղած մի կարծիք այնչափ ընդհանուր՝ ինչպէս հոգու անմահութեան
կարծիքը»:

Պատոն մեծ փելիսովան ասում է «Յանցաւորներն» որ չեն
զգասանում, իրանց արժանի պատիմ կընկդժին տարտարոսը, որտեղից
այլևս չեն կարող գուրս գալ, ուրիշները յաւիտեան կապրին և կանցնին
մի ուրիշ բնակարան՝ որի գեղեցկութիւնը դիւրին չէ ստորագրել»:

Սոկրատ մեծ փիլիսոփան ասում է «Դժոխքի կատաղիները մե-
ղաւորներին քաջուածելով պէտք է տանին տարտարոս. մէկ տանջանքը
չը կերջացած՝ միւսը պէտք է սկսեն»:

Սորանց ո՛վ սովորեցրուց այս ճշմարտութիւնը՝ բնութիւնը. բնա-
կան խելքը, Աստուծոյ յայտնութիւնից լուսաւորուելով՝ որ աւանդու-
թեամբ մեր նախածնողներից անցաւ նորանց, և եթէ այսպէս է՝ ուրեմն
ո՛վ կարող է հակառակի բոլոր աշխարհի ձայնին. և ահա սորան համա-
ձան կեկերոնն ասում է «Ամենեցուն համաձայնութիւն՝ ձայն է բընու-
թեան»:

Աս մեր մտքին անհասանելի է. և միայն նորան են
երկրպագում թէ երկնային և թէ երկրային բոլոր
արարածները՝ իրանց մտքի առած լոյսի համապա-
տասխան:

Ահա այսպէս մեր եռանձնեայ մէկ Աստուածը
երբոր կամեցաւ և յարմարդատեց՝ ստեղծեց երկինքը,
երկիրը և նորանց միջի բոլոր արարածները, և յետոյ
ստեղծեց մարդը՝ նորան բանական ու անմահ հոգւով
զարդարեց, նորա կողիցը ստեղծեց կինը, մարդու
անունը դրեց Աղամ՝ կնոջը Եւայ. նորանց օրհնեց.
տէր և իշխան կարգեց երկրի բոլոր արարածների
վերայ. նորանց դրեց զրախոտի մէջը, որ մի հրաշալի
տեղ էր, զարդարուած ամէն տեսակ բոյսերով, ծա-
ղիկներով և ծառերով, նորա միջումը անմահութիւն
էր տիրում. Աստուած Աղամին և Եւային պատուի-
րեց՝ նորա միջի ամէն տեսակ պտուղներից ուտել,
միայն «բարի ու չարի զիտութեան ծառի պտուղիցը»
չուտել, ասաց՝ որ օրն ուտէք, մահով կը մեռնիք:

Աստուած ստեղծագործութեան առաջի օրը
ստեղծեց 12 զաս հրեշտակներ, որ իրան փառաբա-
նեն և սպասաւորեն. նորանը հոգեղէն արարածներ
են. նորանցից երեք զասը հպարտացան. Աստուած
նորանց պատժեց, նորանց իրանց բարձրութիւնից
իջեցրեց երկիր. նորանը կոչուեցան այս. սատանայ
և ղեւ: Սատանան տեսնելով մարդու փառքը զրախոտի
մէջ՝ նախանձեցաւ, ուստի Եւային խարելով կերցրեց
արգելուած ծառի պտղիցը. Աստուած մարդուն պատ-
ժեց պատուիրազանցութեանը՝ համար՝ և դրախտիցը
գուրս հանեց. այսուհետև սատանան մարդկանց հո-

գիները իւր իշխանութեան տակն առաւ դժոխքումը:

Աստուած զթալով մարդկանց վերայ խոստացաւ իւր փառակից Միածին Որդին ուղարկել աշխարհ, որ խաչով փրկէ մարդուն սատանայի գերութիւնից:

Աստուած թէկ կարող էր մի ըօպէումը և եթ փրկել մարդուն՝ բայց նորան իւր մեղքի ծանրութիւնը և իւր անսահման մարդասիրութեան երախտիքը ցոյց տալու հտմար՝ ժամանակը երկարացրեց. և առաջուց մարդարէների բերաններով յայտնեց՝ որ Փրկիչը պէտք է դայ աշխարհ. և երբոր ժամանակը լրացաւ, Փրկիչ Յիսուսը Մարիամ սուրբ կուսից ծնաւ, աստղի գուշակութեամբ հեռաւոր երկրներից երեք թաղաւորներ եկան՝ նորան թանկագին ընծաներով երկրապագութիւն արին. երկնքումը հրեշտակների բազմութիւն երևեցան, որոնք «Փառք ՚ի Բարձունս Աստուծոյ» ասելով Յիսուսի ծնունդը աւետեցին հովիւներին:

Յիսուսը 30 տարեկան հասակումը Յովհաննիսիցը մկրտուեցաւ Յորդանան գետումը. Հոգին սուրբ աղաւնակերպ իջաւ վերան. Երկնքիցը ձայն լսուեցաւ թէ «Դա՝ իմ սիրելի Որդին է»:

Յիսուսը 12 առաքեալներ ընտրեց, մարդկանց քարոզեց կատարեալ սէր առ Աստուած և առ ընկերն՝ հրաշքներ գործեց, կոյրերին անդամալոյծներին բըժշկեց, մեռածներին յարութիւն տուաւ, վայ կարդաց կարդացողներին և կեղծաւոր փարիսեցիներին. պորտաբոյծ քահանաներին, ագահ մեծատուններին և այսպէս շարժեց աշխարհասէրների սիրտը ատելութիւն, և այս առիթով խորհում էին նորան մեռցնել. նա մատնուեցաւ իւր աշակերտիցը՝ Հրէից ձեռքով

չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երեք օրից յետոյ կենդանի յարութիւն առաւ, իւր առաքեալներին և շատերին երևեցաւ. 40 օրից յետոյ Զիթենեաց լեռը բարձրացաւ, այնտեղ առաքեալներին օրհնեց և նորանց աչքի առաջ երկինքը վերացաւ, և Հայր Աստուծոյ աջ կողմումը նստեցաւ, խոստացաւ աշխարհի վերջին օրը կրկին աշխարհ գալու, արդարներին հրաւիրելու երկնքի արքայութիւնը, և մեղաւորներին դատապարտելու յաւիտեան տանջուելու:

Եւգինէ.

Սիրելի քոյրերս, ես ձեր պատմած ճշմարտութիւնները սիրով ընդունեցի և այսօրուանից հաւատում եմ ձեր ճշմարիտ Աստուծոյն. ուստի խնդրում եմ ինձ համար մի օրինակ Ս. Գիրք բերել, որ ես ինքս կարդամ և ձեր պատմած ճշմարտութիւնները տեղն ու տեղը ուսումնասիրեմ:

Մարգարիտ եւ Սաթենիկ.

Ահա մեր մօտին ունինք մեզանից անբաժան մի Ս. Գիրք, առ քեզ ընծայ և աշխատիր միշտ կարդալ:

Եւրըինիներ.

Իշխանուհի Եւգինէ, մենք էլ քեզ հետ հաւատում ենք այն Աստուծոյն՝ որի ճշմարտութեանը համար պատմեցին այս սրբասուն օրիորդները:

Մարգարիտ եւ Սաթենիկ.

Եւգինէ քոյրիկ, ահա այսօր այս տանը վերայ

Աստուծոյ Ս. Հոգւոյ փրկութեան լոյսը ծագեց, երանի քեզ Եւգինէ, և ձեզ Աստուծոյ ընտրեալ ծառաներ, դուք այսօրուանից փրկուած էք, մնում է ձեզ մը կրտուիլ, որով որդեգրուիք ամենաբարձրեալ և ճշգմարիտ Աստուծոյն:

Եւգինէ.

Մկրտութիւնն ի՞նչ է. որ ասացիք թէ մնում է ձեզ սկրտուիլ:

Մարզարիտ.

Մկրտութիւնը մեր ս. Եկեղեցւոյ Եօթը խորհուրդից մէկն է, որ քահանան հաւատացեալին ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և ս. Հոգւոյ անունը տալով երեք անդամ ջրի մէջն է ընկդմում և այսպէս նորա մարմինը ջրի մէջ լուանալով՝ հոգին էլ լուացվում է սկզբնական մեղքից (Ադամի պատուիրազանցութեան մեղքից):

Եւգինէ.

Խորհուրդն ի՞նչ է:

Մարզարիտ.

Խորհաւրդն այն է, որ քահանան հաւատացեալի վերայ արտաքին աղօթքները և ձևակերպութիւնները կատարելու ժամանակ՝ ներքուստ էլ Հոգւոյն որբոյց շնորհաբաշխութիւնն է կատարվում:

Եւգինէ.

Եօթը խորհրդի միւսներն որոնք են:

Մարզարիտ.

Մէկը Դրօշմն է, որ քահանան հաւատացեալի մկրտութիւնից յետոյ ս. մեռոնով գրօշմում է նորա մարմնի մի քանի մասերը, որով ընդունում է Հոգւոյն որբոյ շնորհքը, որ իւր հաւատը պինդ պահպանէ:

Մէկն էլ Ազաշիարութիւնն է, որ հաւատացեալը կատարեալ զղմամբ իւր կամայ և ակամայ գործած մեղքերը խոստովանելով քահանայի առաջ Աստուծոյն՝ նորա միջոցաւ թողութիւն կստանայ և կարժանանայ Աստուծոյ որդեգրութեանը:

Մէկն էլ Հաղորդութիւնն է, որ հաւատացեալը ձաշակելով քահանայի աղօթքներով սրբագործուած Հաց ու Գինին՝ նոյն խոկ Յիսուսի Մաքմին և Արիմը, կը լինի հաղորդակից հաւատացեալներին և ժառանգ երկնքի արքայութեանը:

Մէկն էլ Ամուսնութիւնն է, որ հաւատացեալ այր և կիսը իրանց ազատ հաւանութեամբ կը գնան Եկեղեցի և քահանան տեղեկանալով նորանց իրանց հաւանութիւնը՝ սահմանադրուած օրհնութիւններով հաստատում է նորանց անբաժանելի միութեանը կապը:

Մէկն էլ Զենաաղորութիւնն է, որ ժողովրդից ընտրուած հաւատացեալի արժանիքը Եպիսկոպոսը քննելուց յետոյ ս. միւսնի օծմամբ ձեռնադրում է նորան քահանայ՝ մատակարելու Եկեղեցւոյ ս. Խորհուրդը, և հովուելու ժողովրդին:

Վերջին խորհուրդն էլ Օծումն հիւանդաց է, որ քահանան հիւանդ հաւատացեալին Ս. Իւղով օծում է և շատ անդամ վերան միմիայն աղօթքներ է կարդում:

Մեր եկեղեցին բացի այս եօթը Ս. Խորհուրդներից ընդունում է Հանդերձեալ կեանք. որ Յիսուսը իւր անսուտ խոստման համաձայն կրկին գալու է աշխարհ, ոչ առաջի գալու նման անշուք. խոնարհ և հեզ, այլ իւր բոլոր փառքերովը և բոլոր հրեշտակներով՝ արդարներին հրաւիրելու է երկնքի արքայութիւնը, իւր անձառելի փառքերը յաւիտեան վայելելու, իսկ մեղաւորներին հեռացնելու է դժոխքը իրանց չար գործքերի պառուղը դառնագոյն տանջանքներով յաւիտեան կրելու:

Եւգինէ.

Հիանալի են ձեր ս. եկեղեցւոյ խորհուրդներն և հաւատալիքը, ուստի փառք եմ մատուցանում ճշմարիտ Աստուծոյն և շնորհակալութիւն ձեզ, որ դուք իմ հոգւոյ կռապաշտութեան խաւարով կռւրացած աշքերը բաց արիք տեսնելու ճշմարիտ Աստուծոյ լիաճառագայթ լոյսը. և ահա ինձ հետ այդ լուսովը լուսաւորեցիք և իմ հաւատարիմ ներքինի ծառաներս. և սորանց՝ ահա այսօրուանից ընդունում եմ որպէս իմ հարազատ եղբայրներ. ուստի կրկին ու կրկին յայտնում եմ ձեզ իմ սրտագին շնորհակալութիւնը:

Մարգարիտ եւ Սաթենիկ:

Եւգինէ քոյրիկ և յարգելի եղբայրներ, այժմ Աստուծոյ ճշմարիտ խօսքը ձեր սրտերումը սերմանելուն պէս՝ տեսնում ենք նորա խակոյն և եթ բեղմնաւորիլը. և այս դէպքումը երբէք չի երևում մարդկային հանճարի ոյժ՝ այլ Աստուծոյ հրաշք, ուստի

ապահով ենք ձեր փրկութեան մասին՝ մնացէք խաղաղութեամբ:

Եւգինէ.

Հոգւոյս խորքիցը յայտնում եմ ձեզ շնորհակալութիւնս, գնացէք բարեաւ և խաղաղութեամբ:

Դ. ՊԱՏԻԵՐ.

(Փիլիպպոսը եւ Կղողիէն)

Փիլիպպոս.

Իշխանուհի Կղողիէ, Եղիպտոսը՝ արգէն սրտիս ուզածին պէս բարեկարգեցի, իշխանները և մեծամեծները բոլորն էլ շատ հաւատարիմ. նսազանդ և օրինապահ են, ժողովուրդը խաղաղ է և գտնվում է նախանձելի վիճակի մէջ. և որովհետև Եւգինէս ունի անհամեմատ գեղեցկութիւն՝ այս պատճառաւ մեծամեծներից շատերը ցանկանում են նորա ձեռքը իրանց որդւոց համար. և ես կամենում եմ նորան ամուսնացնել, այս մասին դու ինձ ի՞նչ խորհուրդ կը տաս:

Կղողիէ.

Մեծ իշխան, Եղիպտոսը որքան էլ կուզէ լաւը լինի՝ այսու ամենայնիւ պէտք է մտածել՝ որ իշխանների վիճակը խիստ շատ խախուտ է. դու այսօր այստեղ կարգուած ես վոփսարքայ՝ վաղը շատ կարելի է քեզ տեղափոխեն Հոռվմ և կամ մի ուրիշ տեղ,

այնուհետև մեր սիրելի ու մէկ հատիկ դուստրը պէտք
է տանջուի իւր ծնողների և եղբայրների կարօտովը,
նոյնպէս էլ մենք ենք տանջուելու նորա կարօտովը և
վիճակի որպիսութեամբը՝ իցէ թէ նա շատ ուրախ
և երջանիկ վիճակի մէջ լինի, այնու ամենայնիւ մենք
զանազանակերպ մտատանջութիւններով անհանգիստ
ենք լինելու. և որովհետև մեր Եւգինէն գեղեցկուհի
է՝ այն էլ անհամեմատ գեղեցկուհի. ուստի ես քեզ
խորհուրդ կը տամ, որ աշխատիս նորան տալ Հռովմի
իշխանների մէկի որդուն՝ և այսպէս բարեկամական
ցանցով կապուիլ մեր ծննդավայր Հռովմի իշխանների
հետ, որտեղ գտնվում են մեծ կայսրը և մեր բարե-
կամների լեգէօններն և Հռովմում կունենանք մեծ ոյժ
և կայսեր մօտ մտերիմներ. այնուհետև ուր որ գնանք
մեր կետրոնավայրը լինելու է Հռովմը. ահա այս է իմ
խորհուրդը:

Փիլիպպոս.

Աշխանուհի Կղողիէս, շատ գեղեցիկ խորհել ես,
և ես համաձայն եմ քո քաղցրաճաշակ համեմներով
եփած արտայայտութիւններին և այնպէս էլ կամենում
եմ իմ դուստրը տալ Հռովմէացի ազնուական Ակուի-
դուին՝ որի հայրը Հիւալատոս է:

Կղողիէս.

Երբոր դու այդպէս նախամտածուած պատրաս-
տութիւն ես տեսել, ես ևս համաձայն եմ միայն
պէտք է նախապէս մեր Եւգինէի հաճութիւնն էլ առ-
նենք:

Փիլիպպոս.

Շատ լաւ, շատ լաւ, աղախի՞ն:

Աղախին.

Հրամայիր մեծ իշխան:

Փիլիպպոս.

Գնա Եւգինէիս սենեակը և նորան ասա «իշխան
հայրդ քեզ հրաւիրում է»:

Աղախին.

Եւգինէ իշխանուհի, քո իշխան հայրը քեզ հրա-
ւիրում է, եկ երթանք:

Եւգինէ.

Պատրաստ եմ, Եկ գնանք:

Աղախին.

Ահա և ես պատրաստ եմ քեզ առաջնորդելու:

(Գնում են)

Եւգինէ.

Ողջն ձեզ իմ պաշտելի ծնողներ:

Փիլիպպոս.

Բարի եկիր, մեր սիրելի դուստր Եւգինէ, եկ և
նստիր:

Եւզինէ.

Իշխան հայրիկ, հետաքրքիր է ինձ տեղեկանալ
թէ արդեօք ինչու էք ինձ կանչել և ինչ էք կամե-
նում ինձ պատուիրել:

Փիլիպպոս.

Իմ սիրասուն գնւսար, քեզ չունիմ ոչ մի պատ-
ուէր՝ միայն տեսնում եմ, որ դու հասել ես բաղդա-
ւորուելու հասակդ և ես մտածում եմ՝ որ քանի վաղ
է՝ շտապեմ քեզ բաղդաւորեցնել:

Եւզինէ.

Իշխան հայրիկ, միթէ ես 'ի ծնէ բաղդաւոր չեմ,
որ ասում ես. «թէ արդէն հասել ես բաղդաւորուելու
հասակդ»:

Փիլիպպոս.

Այն, իմ սիրելի դուսար, դու միշտ բաղդաւոր
ես, բայց այդ բաղդաւորութիւնը թերի է, երբոր մի
ուրիշ քո նման պատանու հետ ընկերանաս՝ այն ժա-
մանակ քեզ բաղդաւորութիւնը կատարեալ կը լինի.
պարզն ասեմ, կամենում եմ քեզ ամուսնացնել չոռվ-
մէացի Ակուիզոսի հետ, որ քեզ նման գեղեցիկ պա-
տանի է. ազնիւ ցեղից սերուած և որի հայրը չիւ-
պատոս է:

Եւզինէ.

Իշխան հայր, նախապէս ինդրում եմ ձեր ներո-
ղամտութիւնը, որովհետև այդ մասին հարկաւոր է

ունենալ մեծ զգուշութիւն, որ արժանիք ունեցող
փեսայացու ձեսք բերելու համար կատարուի բազմա-
կողմանի յաջող ընտրութիւն, չը պէտք է նայել նորա
ազգի և տոնմի մեծութեանը և ազնուականութեանը,
այլ պէտք է ուշադրութիւն դարձնել նորա բնածին
գովելի բնաւորութեանը և բարելաւութեանը. ուստի
հայր իմ, մի՛ շտապիր անլնարողութեամբ տալ ինձ
մեծատան որդու, այլ սպասիր մինչև որ գտնուի
ամէն կողմեց գովաբանուած լաւը և կատարեալը:

Փիլիպպոս.

Լաւ ես ասում, իմ սիրելի դուսար, գնա քո
սենեակը և եղիր հանգիստ, մենք յոյս ունինք՝ որ մեր
աստուածների օգնութեամբ շուտով կը յայտնուի
ամենայն բարեմասնութեամբ օժտուած քեզ հաճելի
փեսայացուն:

Եւզինէ.

Մնացէք բարեաւ իմ պաշտելի ծնողներ. ես կը
գնամ իմ սենեակը և հանգիստ սրտով կաղօթեմ իմ
Աստուածոյ կարգադրութեանը:

Փիլիպպոս եւ Կղողիէ.

Մեր սիրելի դուսար, գնա և աղօթիր և քեզ
յանձնիր մեր Աստուածների բարեկամեցողութիւննե-
րին:

Գ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ՊԱՏԿԵՐ.

Եւգինէի պատրաստութիւնը և ծպտեալ փախուստը:
Եւգինէ.

Պոօտոս և Յակինթոս, ձեզ առաջ էլ ասացի,
որ ձեզ այս օրիցն սկսած՝ ոչ թէ ներքինի ծառա-
ներ՝ այլ իմ հոգւոյ եղբայրներ եմ ընդունում. ահա
ձեր առաջ վստահութեամբ բաց եմ անում սրտիս
մէջ ամբարած այն բոլոր ճշմարտութիւններն՝ որոնք
մթերուած են այս Ս. Գրքի մէջ.

Ուղիղ մի տարի է՝ որ սորա սկզբիցը մինչեւ
վերջն ուշադրութեամբ երկու անգամ կարդացի և
մնացել եմ զարմացած, չը գիտեմ՝ սորան ինչ անուն
տալ, որով կարողանամ սորա անսահման մեծութիւնը
ձեզ բացատրել, այսքանը միայն կարող եմ ասել, որ
սա մայր է աշխարհիս իւր տեսակի բոլոր գրքերի,
սորա անունը Աստուածաշունչ է, սա արդարև գըր-
ուած է Աստուծոյ շնչովը և հեղինակութեամբ, սա
գիտութիւնների անհուն ծով է և իմաստութեան ան-
սպառելի աղբիւր։ Սորա տասնեմէկ գլխումը գրուած
է թէ առաջի ստեղծուած մարդը Ադամը ապրեց 930

տարի վերջը մեռաւ, Մէթն ապրեց 912 տարի՝ վեր-
ջը մեռաւ. Ենովսը ապրեց 905 տարի՝ վերջը մե-
ռաւ, Մազաղիէլն ապրեց 895 տարի՝ վերջը մեռաւ, Մաթուս
աղան ապրեց 969 տարի՝ վերջը մեռաւ. բոլորն էլ
ապրել են երկար տարիներ վերջը մեռել. երբոր
սորանք երկար ապրել և վերջը մեռել են. ուրեմն
մենք՝ որ կարճ ենք ապրում հետևապէս շուտով մեռ-
նելու ենք, էլ ինչո՞ւ համար աշխարհասիրութեամբ
յափշտակուել ենք այն աստիճան՝ որ այս կեանքի
աքսորավայրը՝ համարում ենք մեզ համար բնիկ հայ-
րենիք և մեր պանդիմուրէն ճանապարհորդութիւնը՝
բնակելու հաստատուն տեղ. որտեղ հակառակի պէս
ապրում ենք վայրկեանամէջ, և այսպիսի կեանքից
ուրիշ ոչ մի բան չունենք, եթէ ոչ ներկայ վայր-
կեանը. ահա անցեալ տարիներն անցած գնացել են
նորանց համար արդէն մեռած ենք, ապագայ տարի-
ների համար՝ չը կանք. նորանց համար դեռ ծնուելու
ենք, երեկուայ օրն արդէն անցել չքացել է, վա-
ղուայ օրն անստոյդ է. իսկ այսօրուայ ժամերի մեծ
մասն անցել է, որոնց համար չը կանք. որոնք էլ
գալու են՝ չը գիտենք. թէ կարող ենք նորանցում
ապրել. և այս բոլորը ի միասին հաշուելով՝ կը տեսնենք՝
որ չը կանք, եթէ ոչ այս իսկ վայրկեանում՝ որ ապրում
ենք վայրկեան առ վայրկեան մեռնելով, և ահա այս-
պէս մեր վաղանցուկ կեանքը չենք կարող կոչել մի
որ և է բան՝ եթէ ոչ վայրկեանամէջ, որ մահի և
կեանքի մէջ անբաժան կերպով կիսուած է երկուսի.
Չը գիտեմ, ով է այն մարդը՝ որ աչքով տես-

նէ երկնքի փառքը և դժոխքի տանջանքը՝ երկուսն էլ յաւիտենական, և սիրտ չանէ հոգւոյ քաջութեամբ անցնել հուրը և սուրը՝ Փրկչին հաճելի լինելու համար, այն Փրկչին՝ որ ասում է «ով որ հօրը կամ մօրը ինձանից աւելի կը սիրէ՝ ինձ արժանի չէ. ով չի առնել իր խաչը և չի գալ իմ յետեկից՝ ինձ արժանի չէ»:

Փրկչի այս պատուէրների համաձայն՝ ես մըտքումս գրել եմ թողնել հօրս, մօրս, եղբայրներիս, շքեղաշուք տունս, փափկասուն կեանքս, լի ու ճոխ վայելքս, առնել Փրկչիս խոնարհութեան և անձնութացութեան խաչը ու գնալ նորա յետեկից. արդ՝ այս իմ նախզծուած ծրագրի մասին՝ դուք ինձ ինչ խորհուրդ կտաք:

Ներքինիներ.

Եւզինէ իշխանուհի, մենք հաւանում ենք քո ծրագրին և ճշմարիտ Աստուծոյ առաջ ուխտում ենք, որ դու ուր գնա՞ մենք էլ քեզ հետ կը գանք, մեր վերջին շունչը ամենայն հաւատարմութեամբ քեզ կը ծառայենք, քո հրամանը սրբութեամբ կը կատարենք, որքան աղօթեն՝ մենք էլ քեզ հետ կաղօթենք, պահք պահեն՝ մենք էլ քեզ հետ կը պահենք, ինչ ուտես՝ մենք էլ քեզ հետ այն կուտենք, քեզ ճշմարիտ հաւատացնում ենք՝ որ մեզ քեզանից մահը միայն կարող է բաժանել:

Եւզինէ.

Շատ լաւ ասացիր, այս ըօպէին կը գնանք և կը գնենք թէ շորեր և թէ ինչ որ հարկաւոր է՝ բոլորը կը պատրաստենք:

թեանը՝ գիտեմ, որ գուք էլ հաւատացած էք, որ փրկութեան և երանութեան ճանապարհն այն է, ու րով գնում են Քրիստոսի հաւատացեալները. ուստի մենք էլ շտապենք գնալ այն ճանապարհովը և ծառայենք ճշմարիտ Աստուծոյն:

Ես լսել եմ Հեղինոս անունով մի սուրբ եպիսկոպոսի համար, Աստուծած նորա ձեռքով անում է մեծամեծ հրաշքներ, գնանք նորա մօտ, նա մեզ կը մկրտէ և ցոյց կը տայ մեզ փրկութեան ճանապարհը:

Ներքինիներ.

Մեր քոյր իշխանուհի, մենք պատրաստ ենք գնանք երբ կամենաս:

Եւզինէ.

Հոգեոր եղբայրներս, հարկաւոր է ինձ առաջուց պատրաստել տղամարդու շորեր, որ ինձ տեսնողները պատրաստել տղամարդու շորեր, որ ինձ առաջ գնաշիմանան՝ որ ես օրիորդ եմ, ահա ձեզ գրամ՝ գնաշիմանան և ինձ համար գնեցէք տղամարդու հասարակ շորեր:

Ներքինիներ.

Շատ լաւ ասացիր, այս ըօպէին կը գնանք և կը գնենք թէ շորեր և թէ ինչ որ հարկաւոր է՝ բոլորը կը պատրաստենք:

Եւզինէ.

Ուրեմն դուք գնացէք, իսկ ես էլ կը գնամ և հօրիցս թոյլտութիւն կը խնդրեմ՝ գնալ մերձակայ պատրաստենք:
(Գնում են)

Եւգինէ.

Ողջոյն քեզ՝ իմ սիրելի իշխան հայր:

Փիլիպպոս.

Բարի եկիր իմ սիրելի դուստր, ասա ինչպէս ես
և ինչ ես կամենում:

Եւգինէ.

Ամենից առաջ կամենում եմ քեզ, մօրս և եղայրներիս առողջ կեանք հանդերձ անընդհատ յաջութիւններով. և յետոյ քեզանից խնդրում եմ թոյլաւաթիւն, որ այս զարնանային քաղցը և անոյշ օրերումը ներքինիներիս հետ գնամ մերձակայ ագարակները զբոսնելու:

Փիլիպպոս.

Շատ լաւ, իմ սիրելի դուստր, կարող ես ուրախ գնալ և ուրախ և առողջ վերադառնալ՝ բայց ոչ ուշ:

Եւգինէ.

Սրտագին շնորհակալութիւնս յայտնում եմ քեզ իմ իշխան հայր՝ մնաս բարեաւ ցկրկին տեսութիւն:

Փիլիպպոս.

Գնաս բարեաւ սիրելի Եւգինէս՝ ցշուտ տեսութիւն:

Բ. ՊԱՏԿԵՐ.

(Եւգինէն ծպտեալ ներքինիների հետ տղի է ընկ-
նում:)

Ներքինիներ.

Իշխանուհի քնյը, տղամարդու շորերն ահա գնել
ու բերել ենք և գնալու պատրաստաթիւնը տեսել:
(Եւգինէն շորերը հագնամ է)

Եւգինէ.

Ահա շորերը թէև հագայ՝ որ կարծես թէ իսկ
իմ վերայ ձևած է, բայց պէտք է մազերս ել կար-
ճացնէք, որ երեխմ բոլորովին կատարեալ տղամարդ:

(Մազերը կարճացնում են բարդելով և ամրացնելով
գլխի վերայ:)

Ներքինիներ.

Իշխանուհի քնյը, այժմ դարձար մի կատարեալ
տղամարդ:

Եւգինէ.

Արդ, ժամանակն է՝ ուղեորինք, թող Տէրը օրհնէ
մեր ձանապարհը:
(Ուղորվամ են)

Ներքինիներ.

Իշխանուհի քնյըիկ, փառք Աստածոյ, որ քաղա-

քիցը անվտանգ դուրս եկանք, այժմ ահա մտնում
ենք քրիստոնեաների խրճիթները, այստեղ կարող
ենք մեզ ազատ համարել:

Եւգինէ.

Եղբայրներս, տեսնում էք՝ որ ահա մեր առա-
ջից գնացող բազմութիւնը քրիստոնեաներ են, որ
գնալով աղօթում են, լսենք և տեսնենք թէ ի՞նչ են
աղօթում. ո՞հ որքան մեզմ և քաղցր են աղօթում,
կարծես թէ մարդկանց հրաւիրում են երկնքի ար-
քայութիւնը:

Քրիստոնեաներ.

«Խօրայէլի դուրս գալուն...ալէլուիա: Մեր Աստ-
ուածը երկնքումն է, ալէլուիա, ինչ որ կամեցաւ բո-
լորը արաւ, ալէլուիա. Հեթանոսների կուռքերը՝ ոսկի
և արծաթ են ալէլուիա, մարդկանց ձեռքով շինուած
են, ալէլուիա:»

Եւգինէ.

Լսեցիք Եղբայրներս, ահա այս մարդարէական
աղօթքովը՝ հաւատում եմ, որ Աստուած մեր ձանա-
պարհը յաջողել է, որովհետև մենք քաղաքիցը դեռ
նոր ենք դուրս եկել, լսում ենք քրիստոնեաների
սազմուերգութիւնը «հսրայէլի Եղիպատոսից դուրս գա-
լու, ծշմարիտ Աստուծոյ ստեղծագործութիւնը. Եւ հե-
թանոսների կուռքերի ոչնչութիւնը» այս կէտերը
ճիշդ մեր սուրբ նպատակների յաջողութեանն է վե-
րաբերվում:

Ներքինի.

Իշխանուհի քոյրիկ, մեր առաջ իշով գնացող այն
ծերունու մասին՝ որի յետեկից բազմութիւնը գնում է,
կարելի է քրիստոնեաներից տեղեկութիւն խնդրել:

Եւգինէ.

Կարելի է:

Ներքինի.

Յարգելի Եղբայր, արդեօք այդ ծերունին ով է:

Քրիստոնեայ.

«Դու միայն կաս յերուսաղէմ, որ ոչ գիտացեր՝
զինչ գործեցաւ՝ ի նմա յաւուրսս յայսոսիկ». Այդ ծե-
րունին Հեղինսս սուրբ եպիսկոպոսն է. դա հրաշա-
գործ է. դա վիճելով մի կախարդի հետ՝ մտել է կը-
րակի մէջ և անվասս դուրս եկել, այժմ գնում է
այստեղից ոչ այնքան հեռու մի վանք՝ որտեղ բնակ-
վում են աշխարհից հրաժարուած սուրբ մարդիկ:

Ներքինի:

Իշխանուհի քոյրիկ, քրիստոնէի պատմածը ար-
դէն լսեցիր, այժմ ի՞նչ ենք անելու:

Եւգինէ.

Այս, և շատ ուրախ եմ, որ տէրը մեզ հետ է և
մեր ձանապարհը ուղղում է դէպի բարին և դէպի մեր
փրկութիւնը. մենք էլ գնանք այս սուրբ եպիսկոպոսի

յետևից մինչև վանքը և յետոյ կը տեսնենք տիրոջ .
յաջողութիւնը:

Ներքինի.

Իշխանուհի քոյրիկ, ահա հասանք վանքը և սուրբ
Եպիսկոպոսը ներս մտաւ, նորա յետևից ներս են
մտնում քրիստոնեաները և ուրախ գուրս գալի, իսկ
մենք ի՞նչ անենք:

Եւզինէ.

Մենք այստեղ կսպասենք, երբոր մտնողերը դա-
դարին՝ յետոյ մենք ներս կը մտնենք:

Ներքինի.

Իշխանուհի քոյրիկ, քրիստոնեաներն արդէն դա-
դարեցին, այլ ևս ներս մտնող չը կայ:

Եւզինէ.

Այժմ լաւ ժամանակն է, եկէք ներս մտնենք:

(Ներս են մտնում)

Եւզինէ.

Սուրբ հայր, գետին խոնարհած համբուրում ենք
քո ոսները և յայտնում, որ մենք կռապաշտ ենք,
եկել ենք քրիստոնէութիւն ընդունելու. արդ՝ սովոր-
ցրու մեղ փրկութեան ճանապարհը և ճշմարիտ հա-
ւատը:

Հեղինոս.

Ասացէք ինձ, դուք ո՞ր տեղից և որ ազգիցն էք
և ի՞նչ են ձեր անուները:

Եւզինէ.

Սուրբ հայր, քաղաքով և ազգով չոռվմէացի ենք,
այս եղայրներից մէկը կոչվում է Պոռտոս, միւսը
Յակինթոս և քո ծառայն Եւզինէոս:

Հեղինոս.

Գեղեցիկ անունով կոչվում ես Եւզինէոս, քաջա-
տոհմի քաջութեամբ թողել ես կուռքերը և եկել
Քրիստոսի յետևից նորան ծառայելու, քեզ ճշմարիտն
ասում եմ. Տէրը քո մասին առաջուց ինձ յայտնել է,
որ քո զիմովը՝ իւր փառքի համար շատ անցքեր անց-
նելու են, ուստի զօրացիր Տէրը քեզ հետ է, քեզ չի
թողնել իւր ձեռքիցը, քո այս ընկերներն՝ որ մինչև
օրս ծառայի անուն էին կրում, այժմ բարձրանում
են Քրիստոսի բարեկամութեանը և դուք երեքովդ էլ
ժամանակին կընդունէք փառքի պատկ:

Եւզինէոս.

Սուրբ հայր, մենք եկել ենք մկրտուելու և փա-
փագում ենք՝ որ քո սուրբ ձեռքովը մկրտուինք և
հաղորդուինք:

Հեղինոս.

Սիրելի որդիներս, ես եկել եմ այս վանքի միա-

բանութեանը այցելութեան, ևս այստեղ մնալու չեմ ուստի եկէք քանի վաղ է, ևս ձեզ մկրտեմ և հաղորդեմ:

Եւգինէոս.

Սուրբ հայր, ահա մենք պատրաստ ենք:

Հեղինոս.

Ուրեմն ուշագրութեամբ լսեցէք, ևս ամենասուրբ Երրորդութեան Հօր. և Որդւոյ և Ս. Հոգւոյ անունով՝ այս ջրի մէջ լուանում եմ ձեր մարմինը՝ որով ձեր հոգիները կը լուացին Աղամի սկզբնական մեղքիցը, ահա ձեզ այս սուրբ իւղովը դրօշմում եմ՝ որ չարը չը վստահանայ մօտենալ ձեզ. և Փրկչի կենարար Մարմնովը և Արիւնովը հաղորդում եմ ձեզ՝ որով կը լինիք ժառանգ երկնքի արքայութեանը և Եղայր քրիստոնեաներին:

Եւգինէոս.

Սուրբ հայր, չը գիտենք այժմ մեր սրախ անբացատրելի շնորհակալութիւնը ինչպէս մատուցանենք ամենաբարձրեալ Աստուծոյն՝ որ մեզ յաջողեցրեց քո սրբութեան ոտքը համբուրել և քո սուրբ ձեռքովը մկրտուիլ:

Հեղինոս.

Որդիներս, ևս էլ գոհ եմ, որ ձեզ պէս երեք մարմնազգեստ հրեշտակների մկրտեցի, այլ և պէտք է պակասն էլ լրացնեմ. վանահայր սուրբ հայր, այս երեք հրեշտակները ահա քեզ եմ յանձնում, սորանց

սորանց կընդունես ձեր միաբանութեան Եղայրների կարգումը և կը հոգաս սորանց մարմնաւոր և հոգմոր պէտքերը. և ես ահա գնում եմ՝ բոլորդ էլ մնացէք սուրբ սիրով և խաղաղութեամբ:

Վանահայր.

Գնացէք խաղաղութեամբ սրբազն հայր, և միամիտ կացէք ձեր ինձ յանձնած հրեշտակներին ես ամենայն սիրով կընդունեմ մեր Եղայրական միաբանութեան կարգումը և վերաները կունենամ հարկ եղած հսկողութիւնը և հոգատարութիւնը:

Գ. ՊԱՏԿԵՐ.

Թաղէոս վարդապետը և Մատթէոս քահանան:

Թաղէոս վարդապետ.

Ողջն քեզ տէր Մատթէոս հայր, ինչպէս է ձեր առողջութիւնը և ինչպէս ձեր վիճակը:

Մատթէոս քահանան.

Բարի եկիր Թաղէոս հայր սուրբ, փառք մեծին Աստուծոյ առողջ ենք և նորա ողորմութեամբը վիճակներս բաւականի լաւ, իսկ դուք ինչպէս էք. հրտեղից էք գալի և ուր էք գնում:

Թաղէոս վ.

Փառք մեծին Աստուծոյ, մենք շատ լաւ ենք, ես Հոռվմիցն եմ գալի և գնում եմ Երուսաղէմ Երկրպատ-

գելու Քրիստոսի լոյս գերեզմանին և համբուրելու նորա ոտնակոխ սուրբ տեղերի հողերը. մի, երանի կը լինէր այնտեղ մեռնէի և այնտեղի սուրբ հողումը թաղաւէի:

Մատթէոս ք.

Երանի քեզ, Թագէոս հայր սուրբ, որ գնում ես Երուսաղէմ, ես երկու անգամ գնացել եմ, սրտով փափազում եմ մի անգամ էլ գնալ. բայց չեմ կարող՝ որովհետեւ հիւանդութիւնս չի ներում. մանաւանդ որ ծերացել եմ և օրերս արդէն հաշուած են:

Թաղէոս վ.

Մատթէոս հայր, գեռ Աստուած քեզ երկար կեանք տայ, դու արդէն երկու անգամ երկրաւոր Երուսաղէմը տեսնելու փափազդ առել ես, այժմ պէտք է փափազիս երկնաւոր Երուսաղէմը տեսնելու փափազդ առնել, դու այն ասա քրիստոնեաները քաղաքամասի այս դրսի բաժնումը արդեօք որպիսի վիճակի մէջ են գտնվում, ապահով են հալածանքներից:

Մատթէոս ք.

Սուրբ հայր, քանի որ Քրիստոսի անունը իրանց վրայ են կրում և Նորա անձնուրացութեան սուրբ Խաչը իրանց ուսերի վերայ բարձած ունին. պէտք է նեղութիւններ էլ, հալածանքներ էլ կրեն, բռնութիւնների էլ համբերեն, մարդս առանց նեղութիւն կրելու չի կարող մի հաւի բոյն անգամ ձեռք բերել՝

ուր մեաց որ երկնքի յաւիտենական փառքի անման թագաւորութիւնը հանգատութեամբ ձեռք բերէ. այսու ամենայնիւ ահով ու դողով ապրում ենք:

Թաղէոս վ.

Մատթէոս հայր, արդեօք կը տեսնենք այն ժամանակը՝ որ աշխարհս Տիրոջ գիտութիւնովը լցուի և բոլոր ազգերն իրար հետ եղայրանան, ինչպէս Եսայի մարգարէն՝ այն երանաւէտ ժամանակի համար ասում է. «Գայլլ՝ գառին հետ խոտ կարածէ, ինձը՝ «ուլին մօտը կը պառկի, հորթը, ցուլը և առիւծը ի օմիասին խոտ կարածեն, փոքր տղան կը քշէ նորանց, «եզն ու արջը ի միասին խոտ կարածեն և նորանց «ձագերը խառն կը շրջին, առիւծը եզին պէս յարդ «կուտէ, փոքր տղան կարող է իւր ձեռքը տանել «իմերի և նորանց ձագերի բոյնը՝ և նորանք չեն «վնասել և չեն կարող մէկին դարկել... որովհետեւ «երկիրը Տիրոջ բոլոր գիտութիւնովը լցուեցաւ.»

Մատթէոս ք.

Թագէոս հայր սուրբ, մարգարէն Աստուծոյ հոգւովը է մարգարէացել ու զրել, զրածն էլ հարկաւ ժամանակին կատարուելու է, ինչպէս որ տիսուր ու մութ գիշերին յաջորդվում է վարդակարմիր առաւտ, այնպէս էլ կը գայ մի օր՝ որ այս բռնակալական դառն և գառնագոյն ժամանակին յաջորդէ խալու վարդակարմիր առաւտ և վարդակարմիր ժամանակ և այն ժամագ, ապատ և վարդակարմիր ժամանակ և այն ժամանակ և այն երանաւէտ օրերումը արդարեա ազգերն իրար հետ իրար հետ կեղեցիներն իրար հետ

կը միանան. լեզուներն էլ կը ձուլուեն մէկ, և մէկ խօսքով՝ անջատողական խտրութիւնները միանգամայն բոլոր ազգերից կը վերանան, այն ժամանակ երկինքն էլ կը լինի նոր և երկիրն էլ նոր:

Թաղէռս վ.

Մատթէռս հայր, մենք այդ երանաւէտ օրերը չենք տեսնել՝ թող տեսնողներն ուրախանան. իսկ դու այժմ մեծ գործ կատարած կը լինէիք՝ եթէ քրիստոնէական սուրբ հաւատի լոյսի հետ՝ ուսման և կրթութեան լոյսն էլ տարածէիք այս մասի ժողովրդի և նորանց մանուկների մէջ:

Մատթէռս ք.

Թաղէռս հայր սուրբ, այդ կողմից ապահով եղէք, արդ՝ ես նոյն իսկ սկզբիցն մտածել և հոգացել եմ, Սաթենիկ եկ այստեղ:

Մաթենի.

Ի՞նչ է տէր պապա:

Մատթէռս ք.

Մի ոտանաւոր ասա, որ Թաղէռս հայր սուրբը լոէ և օրհնէ քեզ:

Մաթենի.

Տէր պապա «Մանկական աղօթքն» ասեմ:

Մատթէռս ք.

Ասա, ասա «Մանկական աղօթքը» իմ անոյշ գառնուկ:



ՍԱԹԵՆԻԿ Լ. ԵԱԶՈՒԹԵԱՆՑ

Սալթենիկ.

Դու ես իմ յոյս, ով իմ Աստուած,
Մանկութեանս օքերում,
Սուրբ հաւատոց հաստատ պահիր,
Կեանքիս ամբողջ ընթացքում:

Դու ես իմ յոյս, ով իմ Յիսուս,
իմ պատանի հասակում,
Երջանկութեան փայլուն յոյսս
Անշեղ պահիր իմ հոգում:

Դու ես իմ յոյս ով իմ Փրկիչ,
Ծերութեանս տարիքում,
Քաղցր տեսքիդ անոյշ սէլլը
Անշէջ վասիր իմ սրտում:

Ով իմ Աստուած առւր ինձ շնորհ
Որ ուսումն աւարտեմ,
Հայի վերայ չար խօսողի
Սիրտը բարին հաստատեմ:

Խղճուկ ազգիս կարիքների
Ամէն մէկին աշխատեմ,
Խաղաղ կեանքի շունչ ու հոգի
Գլխիս գնուլը հասցնեմ:

Յետոյ ով Տէր, պարզ երեսով
Մաքուր սրտով ծունկ չոքեմ,
Հոգուս խորքից յուզուած սրտով
Փառք քեզ Աստուած փառք գոշեմ:

Թաղէոս վ.

Բարի գալնուկս, քո յոյս Աստուածը՝ թող քեզ
հաստով, յուսով և սէրով զօրացրած պահէ, և բոլոր
փորձանքներից պահպանէ, այլև քեզ իւր շնորհքովը
լի ու լի զարդարէ, որ գու լինիս ազդիդ պարծանիք
բերող օրիորդ և Աստուածոյ փառքին ծառայող ընտ-
րեալներից մէկը: (Դառնալով հայր Մատթէոսին):
Մատթէոս հայր, օրհնեալ լինիս՝ որ այս հաւատա-
ցեալ ժողովրդին Աստուածոյ հոգւովը զօրացրած միի-
թարելուց յետոյ՝ տղաներին էլ ուսմամբ կրթում ես,
վերջապէս այն էլ ասա, արդեօք քաղաքամիջութի-
նոչ կայ և բնչ են խօսում այստեղի մեծ իշխանի
վարչական գործունէութեան մասին, արդեօք նա ու-
նի բնածին ձիրք և քաջութիւն ժողովրդոց բեռների
ծանրութիւնը թեթեացնելու, խոչ և խութերը հար-
թելու, քրիստոնէութեան խստութիւնները վիրացնե-
լու և կերպ-կերպ դժուարութիւնները դիւրացնելու:

Մատթէոս.

Փիլիպպոս մեր մեծ իշխանը քրիստոնեաների
վերաբերութեամբ ունի քաղցր հայեցողութիւն. թէկ
շատ քիչ դէպքերում գործ է գնում բռնութիւն. բայց
ոչ խիստ՝ իւր նախորդների նման, այլ մեղմ. և բացի
այս՝ ունի բնածին ձիրք վարչական գործունէութեան,
սակայն մօտիկ օքերումս նորա անհամեմատ գեղեց-
կունի դուստրն իւր երկու ներքինիների հետ ան-
յացացել են. այս առիթով մեծ իշխանը բոլոր կող-
մերը խուզարկուներ ուղարկեց՝ բայց ոչ միայն չը

գտան՝ այլ և չը կարողացան գոնէ մի տեղից մի որ
և է սոսկ կասկածաւոր լուր ձեռք բերել:

Թուրմերը տեսնելով մեծ իշխանի և իշխանուհու
աղեկառւր ողբերը՝ նորանց հաւատացրին. թէ աստ-
ուածները տեսնելով ձեր դստեր անհամեմատ զե-
ղեցկութիւնը՝ նորան իւր ներքինիներովը կենդանի
վերափոխեցին անմահութիւն և դասեցին աստուա-
ծուհիների կարգումը. Մեծ իշխանը այս մխիթարու-
թիւնը լսելուց յետոյ ձուլել տուաւ իւր դստեր ար-
ձանը գուտ ոսկուց և նորան հրատարակեց աստուա-
ծուհի. իսկ կղողեա իշխանուհին՝ չի կարողանում և
ոչ մի կերպ մխիթարուի. ահա այժմ նորա դուրս
գալու և դստեր կորուսար ողբալու ժամն է գնանք
մեծ ճանապարհի վերայ կանդինք և ՚ի մօտոյ լոենք
նորա մելամաղձոտ ողբը:

Թաղէոս լ.

Մատթէոս հայր, լաւ ասացիր, Եկ Եկ շուտով
գնանք:

(Գնում են)

Մատթէոս ք.

Թաղէոս հայր սուրբ, գնանք, փոքր ինչ էլ առաջ
գնանք, այժմ՝ բաւական է, այստեղ կանգնինք, ահա
նա գալիս է:

(Ողբում է)



Պղնձէ բռնանուէի, ՄԱՅՐ ԵՒԳԻՆԵՒ

Կղողիա իշխանութիւն.

Ո՞վ եւզինէ, իմ եւզինէ եւզինէ,
իմ մէկ հատիկ չքնաղ գուստը եւզինէ:

Գիշեր ցերեկ արտասվում եմ քուն չունիմ,
Վասուած սրտով քեզ փնտուում եմ եւզինէ եւզինէ.
Զայն տուր ուր ես, որ օդնութեան քեզ հասնիմ,
Սրտիս կտոր աչքերիս լոյս եւզինէ, եւզինէ:

Անցնող դարձնղ բարի մարդիկ չէք տեսել,
Թէ ուր գնաց իմ աննման եւզինէն եւզինէն.
Եզիպտուհի մայրեր քոյրեր չէք լսել,
Թէ ինչ եղաւ իմ անուշիկ եւզինէն եւզինէն:

Մարեր ձորեր աղաչում եմ մի պահէք
Չեր խորքերում իմ մէկ գուստը եւզինէն եւզինէն.
Չըեր հովեր Աստուած սիրէք պատմեցէք
Թէ որտեղ է իմ սիրասուն եւզինէն եւզինէն:

Դու ով կռունկ ուր որ գնաս որոնէ,
Թէ ուր մնաց իմ լուսագեղ եւզինէն եւզինէն.
Իսկ գու ծիծառ մտիր տներ քրքրէ,
Գուցէ գանես իմ սրաի յոյս եւզինէն եւզինէն:

(Կղողիան այս կէտումը ուշաթափվում է)

Պ. ՊԱՏԿԵՐ.

(Յովհաննէս վարդապետ և տէր Ղուկաս)

Յովհաննէս վարդապետ.

Օրհնիր ինձ տէր Ղուկաս հայր, ինչպէս ես դու
և քո քրիստոնէայ ժողովուրդը:

Տէր Ղուկաս.

Աստուած քեզ օրհնէ Յովհաննէս հայր սուրբ,
փառք Ամենաբարձրեալին՝ լաւ եմ և նորա օրհնու-
թեամբ խաղաղ ապրում ենք, միայն ասա ինչպէս են
ձեր ձերունի վանահայր Մարկոս հայր սուրբը և ձեր
վանական եղբայրները:

Յովհաննէս վ.

Մեր վանահայր Մարկոս հայր սուրբը վախճան-
ուել է, իսկ մեր միաբանական եղբայրները Ամենա-
բարձրեալի օրհնութեամբ խաղաղ ապրում ենք ու
օրհնում նորա ամենասուրբ Անունը:

Մ. Ղուկաս.

Չեր միաբանութիւնը այժմ նորա տեղը որին է
ընտրել վանահայր:

Յովհաննէս վ.

Նորա տեղը՝ մենք միաձայն հաւանութեամբ վա-
նահայր ընտրեցինք մի երիտասարդ Արեղայի՛ այն է
եւզինէս հայր սուրբին, որ երեք տարի և երեք
ամիս է՝ ինչ որ ընդունուել է մեր միաբանութեան
մէջ:

տ. Ղուկաս.

Այդ ի՞նչպէս է եղել, որ հին ու բազմափորձ ծերունի միաբանութիւններից մէկն ու մէկին չէք ընտրել, այլ ընտրել էք մի նորեկ երիտասարդի:

Յովհաննէս վ.

Տէր Ղուկաս հայր. մեր նոր վանահայրը թէն երիտասարդ է, բայց խելացիութեամբ փորձերի մէջ ծերացածներից գերազանցում է, ունի բնածին հանձար, պայծառ փայլողութիւն, նաև երիտասարդներին միշտ կրկնում է, թէ «Կուզէք բարձրանալ՝ խոնարհ եղէք և Աստուծոյ հրամանը կատարեցէք՝ որ ասում է Մազը սպիտակի առաջ ոտքի կանգնիք և ծերին պատուիր» թէն դուք բոլորդ միաբանական եղբայր էք, բայց պէտք է միշտ 'ի նկատի ունենաք աստիճանը և ըստ այնմ իրար անկեղծութեամբ պատուէք մանաւանդ ծերերին:

տ. Ղուկաս.

Այդ նոր վանահայրը՝ արդեօք ի՞նչ արժանիք ունէք և ի՞նչպէս եղաւ նորա ընտրութիւնը՝ հետաքրքիր է ինձ ունենալ տեղեկութիւն:

Յովհաննէս վ.

Մեր վանահայրը երբոր մեռաւ, մենք բոլորս մտածեցինք նորա տեղը վանահայր ընտրել Եւզինէոսին՝ թէն նա հասակով փոքր էր՝ բայց մենք փորձով գիտէինք, որ նա մաքուր վարքով գերազանցում է մեր անապատական բոլոր եղբայրներից և առաքի-

նութեամբ յաղթում բոլոր բազմամեայ փորձառու հասակաւորներին. ուստի միաձայն նորան ընտրեցինք, բայց նա յանձն չէր առնում, երբ որ սրտագին աղաչելով ստիպեցինք՝ այն ժամանակ բերել տուաւ սուրբ Աւետարանը և մեզ ասաց, Աստուծոյ ծառաներին հարկաւոր է իրանց բոլոր գործքերի մէջ առաջնորդ ունենալ մեր Փրկիչ Յիսուսին. ուստի կը բանամ այս սուրբ Աւետարանը՝ տեսնենք բացուած էջի առաջի տանը ձեր այս ընտրութեան վերաբերութեամբ ինչ կամք կը յայտնէ՝ նորա հրամանին հնազանդուինք, բաց արաւ և կարդաց հետեւեալ տողերը «Զեղանից ով որ կամենում է մեծ լինել, թող ձեզ ծառայ լինի. և ձեզանից ով որ կամենում է առաջինը լինել՝ թող ձեզ սպասաւոր լինի»: Այս կէտումը Հայր Եւզինէոսն ասաց «Յիսուսի այս հրամանին հնազանդում եմ և յանձն եմ առնում այս սուրբ և ծանը պաշտօնը:

Ոհա այսուհետեւ կը լինիմ ձեզ թէ վանահայր և թէ ձեզ ծառայ և սպասաւոր. միայն ձեզանից խընդում եմ հնազանդութիւն և անկեղծ սէր թէ առ Աստուծ, թէ առ ձեր մարմնաւոր և հոգեսոր իշխանութիւնը և թէ ձեր միաբանական եղբայրութիւնը. վստան եղէք իրար, միայն վախեցէք նորանից՝ որի սրտի մէջ մաս չէ դրել Աստուծոյ վախը, չը շփոթուիք աշխարհիս յեղափոխութիւնից, աշխարհս յեղափոխութեամբ է յառաջաղիմելու, ժողովրդի երջանակութիւնը յեղափոխութիւնից է կախած. զուտ ոսկութիւնը յեղափոխութիւնից է կախած. աշխարհիս կին իւր յարգն ունի՝ կեղծը իւր յարգը. աշխարհիս մէջ բարի գործերը թէն գժուարութեամբ են կա-

տարվում՝ բայց բերում են մեզ երջանկութիւն, չար գործքերը թէև հեշտութեամբ են կատարվում, բայց բերում են մեզ դժբաղութիւն. լաւ է մեզ այժմ անցնել կրակի ու բոցերի միջով՝ յոյս ունենալ զովրար ցողի՝ քան լինիլ այժմ հով ու զօվ ցողի մէջ՝ և վախ ունենալ անշէջ կրակի ու բոցերի: Այս աշխարհը խաւար գիշերի նման է, այսուեղ քչերն են տեսնում պարզ և ողիղ, քչերն են բարձրանում դէպի երկնքի անհռանութիւնը. իմաստուն է նա՝ ով գիտում է, որ կրքերը խաբող են և իրանց հետ բերող դառն տանջանքներ: Սովորեցէք անենալ ծերերի առաջ՝ լուսթիւն, իմաստունների առաջ՝ ունկնդրաթիւն, վերակացուների առաջ՝ հնազանդութիւն, ընկերների մօտ՝ սէր, կրտսերների մօտ՝ անկեղծութիւն, քիչ խօսել՝ շատ լսել, խօսքերի առաջ չընկնել, ոչ ոքի չը ծաղրել, ամօթխածաւթեամբ զարդարախիլ, անազարկեշտ կանանց հետ երբէք չը խօսիլ, աչքերդ վայր անենալ՝ մտքերդ վեր, հակառակութիւններից հեռաւ փախչիլ, իշխանաբար չուսուցանել, կարող անձը՝ թող փոխ տայ՝ առանց յետ պահանջելու, կատարած բարիքների հատոցամբ՝ սպասել Յիսուսից յաւիտենականութեան մէջ:

Աշխարհիս կեանքը՝ ճանապարհորդութիւն է՝ որի արախութիւնները և տրամաթիւնները՝ միակերպ անցնում են, և մենք էլ նոյնպէս առաջ ու առաջ ենք գնում և մօտենում գերեզմանին. վերջապէս եթէ ես այժմ՝ որ ձեր վանահայրն եմ և միևնոյն ժամանակ խոնարհվում եմ լինիլ ձեզ ծառայ և սպասաւոր, նոյնպէս էլ դաք պէտք է խոնարհութ և իրար ծա-

ռայէք, չը պէտք է առել, թէ այս բանը պէտք է նա անէ իմ գործը չէ, ոչ, ով որ ընկերի բեռը իւր վերայ կը վերցնէ՝ նա Յիսուսի հրամանը կը կատարէ. մրջիւններից օրինակ առէք, տեսէք թէ ի՞նչպէս առանց մէկի հրամայելու, ամէն մէկը անհանգիստ կատարում է իւր գործը, մենք էլ պէտք է հետեւնք այդ չնչին միջատներին այնպէս անտրտունջ կատարենք մեր բոլոր պարտաւորութիւնները. այն ժամանակ Աստուած էլ կարախանայ և մեր բոլոր սրտերն էլ հանգիստ և ուրախ կը լինին:»

Ճշմարիտ որ, վանահայրը իւր բնակարանը իսկ կոյն հաստատեց այնտեղ՝ որտեղ ծառան էր, նա շատ հեղ ու խոնարհ է, մինչև անգամ ինքն է փայտը կուտորում, և ոչ միայն այսքանը՝ այլ և անհանգիստ հոգում է միաբանաթեան թէ մարմնաւոր և թէ հոգում պէտքերը, աղօթքի կարգը չափաւորեց, ընթերգանութեան և անտեսական գործքերի ժամանական գիշեց, քարոզախօսութեան և Աստուածաբանական վիտութիւններ ուսուցանելու համար՝ զիտնական վարդութիւններ ընտրեց. բոլորին էլ գործ յանձնեց, չը գապեաներ ընտրեց. բոլորին էլ գործ յանձնեց, և թողեց մէկին անգործ՝ որ ստանան՝ նորան իրան համար գործիք դարձնէ:

Այս մէր երիտառարդ վանահայրը՝ չափազանց մաքուր և սուրբ է. պահեցողաւթեան մէջ անհամեմատ գերազանց է, և որ զլիսաւորն է՝ Աստուած նորան տուել է այլև բժշկութեան և հրաշքներ գործերան չորհք, դեերին մարդկանցից հալածում է, հիւլու չորհք, դեերին մարդկանցից հալածում է, հիւլանդներին և կոյրերին բժշկում. նա զեռատի է, ւանդներին և կոյրերին բժշկում. նա զեռատի է, թարմ և չափազանց զեզեցիկ, ինչպէս դէմքով՝ նոյն-

պէս հոգւով. ահա այսպիսի և նմանը չը տեսնուած
շնորհալի է մեր նոր և անզուգաստիպ վանահայրը:

Տ. Ղուկաս.

Երանի ձեզ, որ այդպիսի շնորհալի և սրբասուն
վանահայր ունիք, զիտէք՝ Առառւած ձեր միաբանու-
թեան առաքինական կեանքը տեսնելով՝ ձեզ համա-
պատասխան վանահայր է տուել, որ Յիսուսի սէր և
խաղաղութիւնը ձեր մէջ միշտ թագաւորէ, որ ձե-
զանից ոչ մէկը սատանայի թելազրութեամբ չը շե-
ղուի և չը գուրս գայ կորսածեան բազնիքը, այլ բո-
լորդ էլ ՚ի մի սիրտ և ՚ի մի հոգի եղած՝ ահեղ ա-
տեանի օրն պարզերէս ընդունէք ձեր գլխին յաւի-
տենական փառքի պատկը:

Յովհաննէս վ.

Տէր Ղուկաս հայր, շնորհակալ եմ քո բարեմաղ-
թութիւնից. պէտք է ասած՝ որ բաւականի խօսե-
ցինք, ժամ է արդէն գնամ իմ գործին, օրհնիր ինձ,
մնացէք խաղաղութեամբ:

Տէր Ղուկաս.

Յովհաննէս հայր սուրբ, դու ամենաբարձրեալ
Աստուծոյ մեծ շնորհքներովը օրհնուած ես և օրհ-
նեալ լինիս, գնա խաղաղութեամբ:

Դ. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ա. ՊԱՏԿԵՐ

(Ծերունի Ռուհի և կալուածատէր Մելանայ)

Ռուհի.

Տիկին Մելանայ, ես այսօր գործով գնացել էի
քրիստոնեաների թաղը, այնտեղ նորանց ծերունի
քահանայի մօտ եկել էր քո կալուածքից ոչ այնքան
հեռի մօտակայ վանքի մի անապատական նա պատ-
մեց. թէ մեր նոր վանահայրը թէն գեռահասամկ՝ բայց
չափազանց առաքինի և սուրբ մարդ է, ունի շնորհք
և բժշկում է հիւսնդներին, կոյրերին և հալածում է
դեերին. ուստի տիկին ես քեզ խորհուրդ եմ տալի,
որ գաս և քեզ տանինք նորա մօտ և նա անպատճառ
քեզ կը բժշկէ քո գարշելի ջերմիցը:

Մելանայ.

Ծերունի Ռուհի քնյը, դու շատ դիւրահաւատ ես
երեսում և միամտօրէն խօսում. թէն մեր քուր-
մերն շատ ագահ են՝ եթէ ոսկու անձրկ էլ գայ, չէ
կարող բաւարարութիւն տալ նորանց անընդհատ ա-
ճող տենչանքներին, բայց այն էլ պէտք է ասած, ո-

բովհետև նորանք կարգաւորեալ հասոյթ չունին՝ այս
պատճառաւ չենք կարող նորանց մեղադրել, ես նո-
րանց ոսկւով ու արծաթով լցրի՝ նորանք չը կարո-
ղացան մեր աստուածների օգնութեամբ իմ ցաւին
բժշկութիւն անել, միթէ այն վանահայրը կարող է՝
այն էլ Հրէից ձեռքով մի խաչուածի օգնութեամբ իմ
ցաւին մի ճար անել՝ այդ անհաւատալի է:

ՈՒՌԵՆԻ.

Տիկին, մազերս սպիտակել է և ես շատ անգամ
տեսել եմ, որ անյուսալի կարծածներից՝ մեծամեծ
յուսուալի հրաշքներ են գործուել. ուստի դու ինձ լոիր
և եկ քեզ Աղէքսանդրիայից տանենք այն վանքը, որ-
պէս թէ օգավոխութեան համար ելեր ես զբօսանքի:

ՄԵԼԱՆԻԱՅ.

ՈՒՌԵՆԻ քոյրիկ. ես շատերից լսել եմ քո պատ-
մածը՝ բայց չեմ հաւատացել, այժմ լաւ եմ համա-
րում զնալ՝ քան չը գնալով ամբողջ կեանքս կասկա-
ծանքով անցնել և զզջալ. աղախիններ պատրաստու-
թիւն տեսէք, պէտք է զնանք զբօսնելու դէպի քրիս-
տոնիաների վանքը:

(Պատրաստում են)

Աղախին.

ՄԵԾ տիկին, թէ կառքը և թէ ինչ որ հարկաւոր
է պատրաստեցինք:

ՄԵԼԱՆԻԱՅ.

ՈՒՌԵՆԻ քոյրիկ, եկ և ինձ հետ նստիր կառքը, որ

քո ընկերակցութեամբ աւելի ուրախ և վստահ գնանք
այն վանքը: (Գնում են)

(Հասնում են վանքը)

Աղախին.

Տիկին, ահա քրիստոնեաների վանքը՝ կառքից
իշնենք՝ թէ շարանակենք զբօսնել:

ՄԵԼԱՆԻԱՅ.

Իշնինք, իսկ դու աղախին ներս մտիր և մեր
մասին յայտնիր վանահօրը:

Աղախին.

Սուրբ հայր, իմ տիկին Մելանան ունի չորեք-
օրեայ սաստիկ ջերմ. եկել է այստեղ քո աղօթքով
բժշկուելու:

ՎԱՆԱՀԱՅՐ.

Տիկնոջդ հրաւիրիք թնդ ներս գայ:

(Մելանան ներս է մանում)

ՄԵԼԱՆԻԱՅ.

Սուրբ հայր, աղաչում եմքեզ, ինձ մի ճար արա,
աղաչիր քո Աստուծոյն՝ որ իմ ջերմացաւին հրաշտ-
գործ է բժշկութիւն:

ՎԱՆԱՀԱՅՐ.

Տիկին, դու հաւատում ես, որ ես մեր Փրկիչ
Յիսուսի անունովը կարող եմ քեզ բժշկել:

ՄԵԼԱՆԻԱՅ.

Այս, հաւատում եմ և նոյն իսկ այս հաւատովս
եկել եմ բժշկուելու:

Վանահայր.

Ուրեմն չոքէր այստեղ:

ՄԵԼԱՆԻԱՅ.

Ուրախութեամբ կը չոքեմ՝ բժշկութեանս յու-
սով:

Վանահայր.

Ո՛վ Տէր Յիսուս, աղաջում եմ քեզ, որ ձեռս
դնելով սորա գլխի վերայ՝ սորա ջերմացաւին շնորհիր
բժշկութիւն և սուրբ իւղիս օծումովը կատարեալ հա-
ւատ:

ՄԵԼԱՆԻԱՅ.

Սուրբ հայր, ահա ես այս բօպէին զգում եմ, որ
բժշկուեցայ. սրտագին շնորհակալութիւնս յայտնում
եմ քեզ և ուրախ կը վերագառնամ և կերթամ կալ-
ուածքս, որ մօտ է այս վանքին:

Վանահայր.

Գնա խաղաղութեամբ. թող մեր ամենաբարձրեալ
Աստուածը քեզ հետ լինի: (Վերագառնում են)

(ՄԵԼԱՆԻԱՆ իւր կալուածքում)

ՄԵԼԱՆԻԱՅ.

Աղախիններ, չափազանց ուրախ եմ, որ Ռուհի
քոյրիկիս խորհրդով գնացինք այն վանքը և ես կա-
տարելապէս բժշկուեցայ. այժմ երախտագիտութիւնս
այն հրաշագործ վանահօրը յայտնելու համար այս
արծաթեայ երեք ամանները՝ որոնք լի են գրամներով՝
կը տանիք իմ կողմից պարզ նորան:

(Նուէրը տանում են)

Աղախիններ.

Սուրբ հայր, մեր տիկինը բժշկութեանը տոի-
թով՝ երախտագիտութիւնը ձեզ յայտնելու համար՝
այս արծաթեայ երեք ամանները դրամով ուղարկեց
ձեզ նուէր:

Վանահայր.

Այդ արծաթեայ ամաններով դամները յետ կը
տանիք ձեր տիկինին՝ և նորան կասէք. Թէ մենք
Աստուածոյ ծառաներս չունինք կարօտութիւն շուայլ
ապրելու, մենք լի ենք այն ամեն բարութիւններով՝
ինչ որ մեր աշխատանքի քրափինքովը ընդունում ենք
Տիրոջ ձեռքիցը. եթէ ձեր տիկինը կամինում է, որ
այդ դրամները բարութեան համար գործ դրուի՝ թնդ
բաշխէ կարօտեալներին:

(Դրամները յետ են տանում)

Աղախիններ.

Տիկին, ահա դրամները իրանց ամաններով:

Մելանայ.

Այս իմ ընծան ինչու յետ բերիք:

Աղախիններ.

Տիկին, նա ձեր ընծան չընդունեց ասելով «Մենք պէտք չունինք ընծաների, եթէ ձեր տիկինը կամենում է մի բարի գործ կատարել՝ թող այդ դրամները կարօտեալներին բաշխէ:»

Մելանայ.

Ո՞հ, սիրոս տիբրեցրիք, ամօթ է ինձ համար՝ որ իմ ընծան չընդունեց այն անշահասէր վանահայրը, բայց այսու ամենայնիւ ես ինքս կը գնամ և կը համոզեմ, որ ընդունէ, ուստի քանի վաղ է՝ եկեք դնահք:

(Գնում են վաճառքը)

Աղախին.

Տիկին, յարմար ժամանակ է, կարող էք ներս գնալ:

(Մելանան ներս է մտնում)

Մելանայ.

Սուրբ հայր, ներիր ինձ, իմ ուղարկած դրամները գուցէ քիչ են և կարօտեալներին ալժանի բաշխելու, դու անհոգ եղիր, ես նորանից կրկնապատիկ և քառապատիկը կուղարկեմ:

Վահահայու.

Բարի տիկին, քեզ առաջ էլ ասացի, որ մենք դրամի կարօտութիւն չունինք, ըստ որում մենք մեր ապրուսար՝ մեր ձեռքով ենք աշխատում, երկիրը վարում, շրերներս գործում, ձեռւմ ու կարում. և այսպէս մենք դրամի պէտք չունինք, իսկ դու եթէ կամենում ես՝ կարող ես այդ գրամմերով բանալ որբանոցներ, աղքատանոցներ, հիւանդանոցներ, արհեստանոցներ և գպրոցներ. ահա այսպիսի միջոցներով չէ թէ միայն երկրիս վերայ հազարաւոր բերաններից օրհնողներ կունենաս, այլ յաւիտենականութեան մէջ էլ կը ժառանգես յաւիտենական թագաւորութիւնը,

ուստի խաղաղութեամբ դարձիր քո տունը:

Բ. ՊԱՏԻԵՐ.

(Մելանան իւր կալուածքումը)

Մելանայ.

Ո՞հ սրտիս տիբրութեան չափն՝ սահմանիցն անցաւ, երբ յիշում եմ այն հրաշագեղ վանահօր թարմ կերպարանքը, աննման գեղեցկութիւնը, նորա հրապուրելի աշքերը, վարդակամիր շրթունքը, անուշախօս լեզուն՝ մնում եմ ապշած: Նորա դէմքի ամէն մի գիծը՝ ինձ կախարդեցին, սիրոս ու հոգիս զրաւեցին: Արդեօք միթէ կարելի է, որ մի տղամարդ չափանցութեան աստիճանին հասած՝ այդքան գեղեցկուածնցութեան աւնենայ. և այն էլ աշխարհից հրաժարուած թիւն ունենայ:

և այն էլ աշխարհից հրաժարուած ապրի մի տիսուր վաճառի մէջ, չէ, ես նորան չեմթողապրի

նել այն անապատի մէջ թառամելու, այլ ամէն հնարք գործ կը դնեմ նորան իմ կամքին զիջելու և ինձ հետ ապրելու, որովհեակ իմ վառվառն սէրը՝ իւր մօտին ունի ամեն փակ գոների բանալին, իմ բոցավառ սէրը՝ կարող է բոլոր դժուարինները՝ դիւրացնել, հեռաւորները՝ մօտեցնել և անհնարինները՝ հնարաւոր դարձնել և միանգամայն իմ բոլոր կարողութիւնը մէկ կողմ դրած՝ պէտք է աշխատիմ կամ նորան տիրապետել և կամ նորա հետ մահու բաժակը ըմպել և հանգիստ մեռնիլ:

(Աղախինը մօտենում է և ասում)

Աղախին.

Տիկին, այս չորս օր է՝ որ վանքից եկել և մտել ես անկողին ու շարունակ զառանցելով տանջվում, ինչ է պատճառը՝ ասա մեզ, գուցէ կարողանանք հեռանգութեանդ ժանտաքեր հովը մի կերպ քեզանից հեռացնել:

Մանայ.

Իմ ցաւն այն է, ես երբոր վանքիցն եկայ, մինչեւ օրս ինձ մի ինչ որ անհասկանալի ցաւ այն աստիճանի տանջում է, որ երբէք չեմ կարողանում անկողնիցս դուքս գալ, ուստի զնացէք վանքը այն սրբակեաց վանահօրն իմ կողմից խնդրեցէք՝ որ դայ և իմ ցաւը բժշկէ:

Աղախին.

Տիկին, զու հանգիստ կաց ես այս բօպէին

Աղաւնու թիով վանահօրն այստեղ կը թոցնեմ քո ցաւը բժշկելու:

(Վանահայրը գալիս է)

Վանահայր.

Բարի տիկին, քո ուղարկած աղախինից լսելով հիւանդութիւնդ՝ եկայ որ քո զլսին աղօթք կարդամ, բայց քո վերան հիւանդութեան ոչ մի նշան չեմ տեսնում, ուստի բարւոք եմ համարում քեզ համար մեր Փրկչից օրհնութիւն խնդրել և վերադառնալ:

Մելանայ.

Հրաշագեղ վանահայր, գեռ մի դնալ՝ այլ լոիր ինձ. ես ցաւում եմ, որ քո գեռածաղիկ ու կայտառ հասակդ, հրեշտակային գեղեցկութիւն ունեցող փայլուն դէմքդ՝ թառամելու է այն տիսուր անապատումը, ես ունիմ մեծ հարստութիւն և մեծ կալուած, ես այրի եմ և քո սիրովը արգէն խելազարութեան աստիճանին եմ հասել, ուստի աղաչում եմ քեզ, եկինձ հետ շոայլ ու ճոխ ապրիր և կամ ինձ հետ ամուսնացիր և այնուհետեւ ինձ հետ երջանիկ կապրիս. և տէր ու ժառանգ կը դառնաս իմ բոլոր հարստութեանը:

Վանահայր.

Զար տիկին. սանձիր քո լեզուն, պապանձի քո բերանը, որից բղխում է ժահահոտութիւն. ի՞նչու հին օձի թոյնը ժայթքում ես իմ վերայ, քո չար խորհուրդը հեռու է Աստուծոյ ծառաներիցս. ոհ. Աստուծուրդը հեռու է Աստուծոյ ծառաներիցս. ոհ.

ուսած իմ, այսօր այս ինչ հըէշի պատահեցի՝ արդ
քանի վաղ է հեռանամ այս դժոխվիցը:

Մելանայ.

Աստուածների գեղեցկութիւն ունեցող հոգեակա
տանս մէջ հաղիւ քեզ ձեռք եմ բերել, ի՞նչպէս կը
թողնեմ մօտիցս հեռանալ. չէ երբէք չեմ թողնել
քեզ մօտիցս հեռանալ, ահա օձիքդ բոնած քեզ իմ
ձեռքուժն ունիմ. քեզ ասում եմ եկ և ինձ հետ քաղց-
րութեամբ ապրիր, հակառակ դէպքումը հետեանքը
կը լինի դառն և ամենասոսկալի:

Վանահայր.

Իրաւի կոչուել ես *Մելանայ* - սկակ, դու ժամա-
կին ես, սատանայի զաւակ, գիհենի որդի և չարու-
թեան ժառանգ, թող Աստուծոյ ծառայիս օձիքը և
դառնամ իմ սրբավայր վանքը:

(Վանահայրը *Մելանայի* ձեռքիցը օձիքը դուրս քար-
շելով վերադառնում է)

Մելանայ.

Աղախիններ, աղախիններ, շնուա, շուտ դուրս
եկէք և տեսէք, թէ այն երիտասարդ վանահայրը
ի՞նչպէս սարսափելի ուժով կամենում էր ինձ բոնա-
բարել, բայց ես ամենաբուռն արիութեամբ դիմա-
գրեցի նորան. նա երբոր տեսաւ իւր յաղթուիլը՝
շտապով դուրս փախաւ, ինչ և իցէ ես այս նախա-
տինքը չեմ թողնել՝ որ նա թեթև կերպով մարսէ.

ուստի ինձ հետ եկէք վաղն և եթ գնանք Աղեքսան-
դրիա. այստեղ կը բողոքեմ Փիլիպպոս Եպարքոսին՝
այն յանդուզն վանահօրիցը. իսկ նորա առաջ երդմամբ
վկայելով կը հաստատէք իմ բողոքը. և դատի վերջը
՚ի նշան իմ ազնուական տոհմի մաքրասիրութեանը
ձեզ առատօրէն կը վարձատրեմ:

Աղախիններ.

Տիկին, մենք պատրաստ ենք դատարանումը՝
ձեր հրամանը կէտ առ կէտ ճշդութեամբ կատարել և
երդմամբ վկայել այն սկահոգի վանահօր ձեզ բոնա-
բարել աշխատիլը և ձեր դիմաղրութիւնից յաղթա-
հարուած փախչիլը:

(*Մելանան դատարանումը*)

Փիլիպպոս.

Տիկին *Մելանայ*, ասա արդեօք ի՞նչ գործ ունիս,
որ նեղութիւն ես կրել և աղախիններով եկել:

Մելանայ.

Մեծ իշխան, մարդուս երբեմն իւր կամքին հա-
կառակ և մինչե անգամ մտքովը չանցած դէպքն է
պատահում, որ հարկադրվում է դիմել զատարան.
արդ՝ իմ կալուածքից ոչ այնքան հեռու գտնվում է
քրիստոնեաների մի վանք, նորա վանահայրը երեկ
առաւոտեան վաղ եկաւ մեր տուն և ուղղակի կա-
մենում էր ինձ բոնաբարել և նախատանաց սև կնիք
գրօշմել մաքուր և անբիծ ճակատիս՝ որով ինձ խո-
գրոշմել մաքուր և անբիծ ճակատիս՝ որով ինձ խո-

նարհեցնէր, ազատութիւնս կորցնէր և հակառակ իմ
կամքին՝ ինձ անամօթաբար հպատակացնէր իր կամա-
յականութեանը և այսպէս ցած և կեղառա անուն դնէր
իմ հօր տան վերայ, ես երբէք չէի կարող նորա ձեռ-
քիցը ազատութիւն ուստի ճիչ բարձրացրի օգնութեան
կանչելով աղախիններիս, որոնք եկան և հազիւ կա-
րողացան ինձ ազատել նորա ձեռքիցը, և նանոյն բո-
պէին փախաւ. ցաւալին այն է՝ ինչպէս հաստատ
տեղեկացել եմ, որ ոչ միայն այն վանահայրն՝ այլ
այն վանքի բոլոր վանականներն էլ պեղծ են և պա-
րապում են առաւելապէս պղծագործութեամբ, թէի
ժողովրդի առաջ իրանց ձևացնում են սուրբ հրեշ-
տակներ՝ բայց նորանք՝ մանաւանդ վանահայրը բո-
լորն էլ մէկ-մէկ սեահոգի սատանաներ են:

Փիլիպպոս.

Այն վանահայրն և կամ վանականներից մէկն ու
մէկը ուրիշ անդամ եկել են ձեր տուն և կամ դուք
վնացել էք այն վանքը և ունեցել էք հետները խօ-
սակցութիւն:

Մելանայ.

Ոչ վանահայրն և ոչ վանականներից մէկն ու
մէկը՝ մեր տունը չեն եկել. միայն մօտ օրերումս
զբունելու պատճառաւ աղախիններովս գնացի այն
վանքը, վանահայրն մօտեցաւ և սկսաւ հետո ան-
պատկառ խօսակցիլ. իսկ ես իսկոյն հեթ խոյս
տուի և վերադարձայ կալուածս, որի և երկրորդ օրը
պատահեց ինձ այս անախորժ գէպքը:

Փիլիպպոս.

Զօրակամներ, այս բօպէիս կը գնաք այն վանքը,
նորա վանահօրը և բոլոր վանականներին շղթաներով
կը կապէք և այնպէս վաղն և եթ կը բերէք այստեղ.
իսկ զու ոստիկանապէտ, մեր մեծ հրապարակը թատ-
րօնի ձևակերպութեամբ կը պատրաստէք, և մունե-
տիկների միջոցով կիմացնէք քաղաքիս բոլոր ազգա-
բնակութեան՝ որ գան տեսնեն և լսեն այն սեահոգի
անապատականների նախատելի արարմունքը և մեր
արդար գատը ու վճիռը և նորանց տալու սոսկալի
տանջանքներով դառնազին մահը:

Գ. ՊԱՏԿԵՐ.

(Ոստիկանապէտն ներկայանում է Փիլիպպոսին և
դատե սկսվում է)

Ոստիկանապէտ.

Մեծ իշխան, հրապարակը պատրաստեցի, ժողո-
վուրդը խուսն լցուած ըրջապատել են, վանահայրը և
վանականները կապուած կանգնացրել եմ մեղապարտ-
ների պատժատեղումը, եկել են Մելանան և իւր ա-
ղախինները, և այս բոլորն էլ սպասում են քո մե-
ծութեանը՝ որ գաս և բազմիս դատողական բեմի
վերայ գատն սկսելու:

(Փիլիպպոսը երկու որդիներովը սկսում է հրապա-
րական դատը):

Փիլիպպոս.

Զինւորներ ո՞րն է վանահայրը և վանականները՝
առաջ բերէք:

Զինուարներ.

Մեծ իշխան, ահա սա է վանահայրը և սորանք
էլ վանականներն են:

Փիլիպպոս.

Առաջ արի սեազգեստ՝ դժւ ես այն վանքի վա-
նահայրը:

Վանահայր.

Այս, մեծ իշխան, ես եմ այն վանքի վանա-
հայրը:

Փիլիպպոս.

Դու, ով խաբերաների մեծը, դու՝ որ այդ վա-
նականի սև զգեստների մէջ փակուել ես, զլուխով սև
վեղարով ծածկել և կիսով չափ երեսդ քօղարկել և
այստեղ ժողովրդի առաջ ձևացել ես մարմնաւոր
հրեշտակ, բայց դու՝ իրաւի եղել ես սատանայ.
Ինչպէս դու՝ այնպէս էլ քո վանականները,
միթէ ձեր Քրիստոսը ձեզ այդ է սովորեցրել՝ որ
բոլոր անօրէնութիւնների մէջ լինիք անխափը՝ մին-
չև այն աստիճան, որ չը պատկառիք ձեռք մեկնել
բռնաբարելումնեցազի և պարկեշտ տիկիններին. ճշշ-
մարիտն ասա Մելենայի քո վերայ ամբաստանու-
թիւնը ուղիղ է և ինչ միջոց ունիք ձեզ արդարաց-
նելու:

Վանահայր.

Մեծ իշխան, մեր Տէր Յիսուս Քրիստոսը՝ որին ես
ծառայում եմ, նա սրբութիւն սրբոց է և մաքրութիւն
մաքրութեանց և նոյնը մեզ սովորեցրեց հոգւով ու մար-
մնով լինիլ սուրբ և անարատ. և այնպիսիներին խոս-
տացաւ մշանջենաւոր կեանքի մէջ իւր Աստուածա-
յին անձառելի տեսութիւնը. իսկ եթէ Մելանան հա-
կառակը չարախօսեց, հարկաւոր է քո մեծութեանը
շուտով չը հաւատալ՝ մինչև որ երկու կողմից էլ
լրիւ լսէք. և այնպէս կարողանաք ուղիղը դատել:
Արդ, եթէ քո ծառան յանցաւոր երեխ չեմ վախենալ
պատժից, իսկ եթէ անարատ գտնուիմ այդպիսի
զգուելի պղծութիւնից. և իմ չարախօսը յանցաւոր
դուրս գայ այս ատենիցը՝ այն դէպրումն էլ կաղա-
չեմ ձեզ՝ որ ինձ համար նորան չը պատժէք, որպէ-
ս հետեւ մեր օրէնքը մեզ այսպէս է պատուիրում. ա-
նոխակալ լինիլ. մեր չարախարներին՝ չարի փոխա-
րէնը՝ չար չը հատուցանենք:

Փիլիպպոս.

Սերգէ և Ապիտոնն, զարմանում եմ սորա իմաս-
տուն պատասխանի վերայ. որ երբէք չէի յուսալ-
րայց աւելի հաւատում եմ Մելանայի չարախօսու-
թեանը՝ քան սորա հանձարաւոր խօսքերին:

Մերգէ եւ Ապիտոն.

Ուղիղ էք ասում Մեծ իշխան հայր, մենք էլ
մնում ենք ապշած դորա հանձարաւոր պատասխանի
վերայ:

Փիլիպոս.

Աղախիններ, դուք ի՞նչ էք տեսել և ի՞նչ էք գիտում ուղղն ասացէք:

Աղախիններ.

Մեծ իշխան, մենք երբ որ ներսիցն աղմուկի և ճշալու ձայն լսեցինք. իսկոյն ներս վազեցինք օդութեան և հազիւ կարողացանք սորտ ձեռքիցը մեր տիկնոջն ազատել:

Փիլիպոս.

Դուք, անիրաւ խարեբաններ, դուք՝ որոնց որ խարել էք՝ ինձ չէք կարող խարել, ուստի այժմ և եթ դառն տանջանքներով պէտք է վայելել տամ ձեզ՝ ձեր զգուելի արարմանց պառզը. զօրականներ պատրաստեցէք տանջանքների գործիքները:

Վանահայր.

Մեծ իշխան, շատ անգամ պատահում է, որ արտաքին հանգամանքներով և վկանների ստայօդ ցուցմունքներով մեղաղբածը յանցաւոր է ճանաչվում, այսպիսի գէպքումը չը պէտք է մեղաղբեալի կեանքի հետ խաղալ, նորա կեանքի հետ թեթև կերպով խաղաղող դատաւորը՝ իւր կեանքի գէմ խաղալ կը պատրաստէ. ուստի պէտք է երկայնմտութեամբ գործը ձգձել՝ մինչեւ որ մի կողմից յաջողուի արգարութեան լոյսը ճառագայթացնել զրպարտուած մեղաղբեալի վերայ և ապա կայացնել վճիռը. մեր օրէնքը միշտ զգուշացնում է դատաւորներին արթուն

լինիլ՝ որովհետև դատաւորների վերայ անաչառ դատաստան՝ զօրաւորների վերայ՝ լինելու է զօրաւոր քննութիւն:

Փիլիպոս.

Դու այդ խօսքերովդ կամենում ես ինձ մոլորեցնել՝ որ դատներդ ձգձելով ժամանակ շահիք, որ կարողանաք ձեզ արդարացնելու միջոցներ ձեռք բերել. չէ այդ անկարելի է, ձեր յանցանքը այնքան յայսնի է՝ որ այլևս կասկածելու տեղ չը կայ. դուք ամեն կողմից յանցաւոր էք ճանաչվում, ըստ որում՝ ի՞նչ հարկ կայ՝ որ Մելանայի պէս մի հարուստ ալիկին՝ իրան այն աստիճանի խոնարհեցնէ՝ որ ձեզպէս աչքից՝ ընկածներից, մտքից՝ մոռացածներից գայ Ատեան բողոքէ այն էլ իրան բոնաբարելու համար. չէ այդ անհաւատալի է, ուստի դու և քո սեւանգի վանականներովդ յանցաւոր էք, և անպատճառ պէտք է այժմ և եթ՝ ի տես այս խուռն ժողովրդի՝ խայտառակութեամբ պատժուիք և սոսկալի տանջանքներով սպանուիք:

Վանահայր.

Մեծ իշխան, երբ որ բանը այս կէտին հասաւ, այլևս պէտք չէ լոել. այլ պէտք է ճշմարտութիւնը յայտնել. եթէ լոեմ՝ վախենում եմ, գուցէ իմ լուութեամբ շատերին պատճառ լինիմ քրիստոնեաների անունը նախատինք դընելու. ուստի լաւ է այս անհրաժեշտ կէտումը ճշշմարիտը աղաղակել և փառաւորել Փրկչիս անունը, որ մի՛ գուցէ իմ լուութեամբ չարը պարծենայ Քրիս-

տոսի ծառաներիս վրայ յաղթանակը տանելու, ուստի բոլորդ էլ ուշագրութեամբ լսեցէք և տեսէք այն ճշմարառութիւնը և արդարութիւնը՝ որ այս սև վեղարիս աակին ծածկուած ունիմ, ահա այն էլ հարկադրուած գլխիցս վերցնում եմ. աես, ՞վ իմ իշխան հայր, ես քո գուսար Եւգինէն եմ՝ որ ինձ համար կորած էիք հաւատացել. բայց ես Յիսուսի սիրոյ և կուսութեանս պատուի համար բոլորը արհամարհեցի և այս հրեշտակային կերպն ընդունեցի, մերկացայ աշխարհը և ինչ որ աշխարհի են և փոխանակը վերաս առայ միմիայն Քրիստոսը. ՞չ ապաքէն՝ այդ երկուքը Սերգէ և Ապիտոնը եղայրներս են. ՞ւր է իմ կղոտիէ մայրը. ահա սորանք՝ երկու ներքինիներս Պոռտոսը և Յակինդոսը, որոնք ինձ ընկեր եղան գնալու մեր Փրկչի վարդապետութեանը յետեից և Յիսուս Քրիստոսով գտնել յաւիտենական երջանիկ կեանքը:

Փիլիպպոս.

Սերգէ և Ապիտոն, գորա քաղցը ձայնը, գեղեցիկ կերպարանքը և անոյշ խօսուածքը իսկութեամբ ցոյց են տալի, որ գա իրաւի իմ գուստը Եւգինէն է. ծառաներ իմացրէք կղոտիէին. Եւգինէ իմ քաղցը Եւգինէ, իմ նազելի գուստը. Եկ քեզ գրկախառնեմ, Եկ համբուրեմ քո անարատ պահած պարզ և մաքուր երեսը, ոհ Եւգինէ Եւգինէս. (Փիլիպպոսը ճանաչելով իւր գուստը Եւգինէին՝ իսկոյն տեղիցը վեր է թըռչւր գուստը Եւգինէին՝ ասկոյն տեղիցը վեր է թըռչւր կը կելով Եւգինէին արտասվում է. նոյնպէս չում և գրկելով Եւգինէին համբուրելով լաց են լինում, եղայրներն Եւգինէին համբուրելով լաց են լինում,

իսկ մայրը Եւգինէին տեսնելուն պէս ուշաթափուած գետին է ընկնում:)

Դ. ՊԱՏԿԵՐ.

(Թաղէոս վարդապետը քրիստոնեաների ժողովարանում:)

Թաղէոս վ.

Ողջոյն ձեզ տէր Մատթէոս հայր, և հաւատացեալ քրիստոնեայ եղայրներ արդեօք ինչպէս էք, ապահնով էք:

Ռըիստոնեաներ.

Փառք ամենաբարձեալ Աստուծոյն՝ բաւական ապահով ենք, բայց գուք ծերացել էք՝ հարկաւ շատ բաներ տեսել, մանաւանդ Երուսաղէմ գնացել, այնտեղից գարձել և Հռոմ գնացել՝ որտեղից էլ կրկին եկել էք այստեղ. արդեօք մեր իշխան Փիլիպպոսի ընտանեաց մասին ինչ տեղեկութիւն ունիք. հոգւոյ բուսն տեսնչով ցանկանում ենք լսել նորանց մասին մի բան՝ եթէ գիտէք և կը բարեհաճիք պատմել մեզ:

Թաղէոս վ.

Իշխան Փիլիպպոսի ընտանեաց մասին ունիմ արդարե ճիշտ տեղեկութիւն. միայն խնդրում եմ տէր Մատթէոս հօրիցը, որ ինձ պատմէ այն՝ թէ իշխան՝ Եւգինէ դստեր յայտնվելուց յետոյ՝ ՞րպիսի կեանք վարեց և ինչպէս եղաւ նորա մահը:

Տէր Մատթէոս.

Շատ բարի սուրբ հայր, ես կը պատսեմ ձեզ իմ աչքով տեսածը և ստոյգ գիտեցածը. Փիլիպպոս իշխանը իւր դստեր քաղցը և ազգու յորդորներով՝ ամբողջ ընտանիքովը ընդունեց քրիստոնէութիւն. և աղաճովութեան համար հարկադրուեցաւ կայսեր զրել. թէ «Մեծ ինքնակալ կայսր, քո տէրութեան մէջ մեծ օգուտ է տեսնվում քրիստոնէաներին խաղաղ պահելու դէպքումը, ուստի թողնել նորանց՝ որ աղատ պաշտեն իրանց կրօնը. որովհետեւ նորանք որքան հաւատարիմ են գտնվում իրանց օրէնքին՝ այնքան աւելի հաւատարիմ ծառայութիւն են ցոյց տալի իրանց մարմնաւոր տէրերին՝ խրատուած լինելով իրանց օրէնքից»։

Կայսր՝ առանց որ և է կասկածանքի հաւատաց Փիլիպպոսին և այս զործը յանձնեց նորա իմաստուն տնտեսութեանը։

Եւ երբ քրիստոնէութիւնը սկսեց ըազմանալ կուսական պաշտոնեաներից մի քանիսը Փիլիպպոսիցը սկսեցին բողոքել Հոռվմ նոր կայսեր. ըստ Ս. Գրոց «Վերկացաւ ուրիշ Փառաւոն՝ որ չէր ճանաչում Յովսէփին։» Փիլիպպոսը նոր կայսրից ստացաւ խիստ հրովարտակ, այն է կամ թողնել Յիսուսին և պաշտել իրանց աստուածները և կամ զրկուիլ իշխանութիւնիցը. և որովհետեւ Փիլիպպոսը խոհեմ և իմաստուն մարդ էր՝ իւր հեռատեսութեամբ մի քանի օր հիւանդ ձեացաւ, մինչև իւր բոլոր հարստութիւնը վաճառեց և բոլոր բաժանեց Եղիպտոսի աղքատներին և ինքը ընտանիքովը հեռացաւ քաղաքիցը դուրս քրիստոնէաների մօտ։

Քրիստոնէաները տեսնելով՝ որ Փիլիպպոսը բազմափորձ, իմաստուն, հեռատես և հանճարեղ մարդ է՝ նորան Եղիպտոսի վիճակի վերայ եպիսկոպոս ձեռնադրել տուին, իշխանը հմուտ լինելով կառավարչական պաշտօնին և Ս. Գրքի իմաստութեանը, շատ լաւ կառավարեց և բոլորի սիրան ու հոգին իրան գրաւած ուներ, չափազանց որբակրօն էր և մինչև անգամ ձեռը գնելով կերպ-կերպ հիւանդների վերայ բժշկում էր, իսկ Եւգինէն կանացի կրօնաւորի զգեստ հագած սրբութեամբ անցնում էր օրերը։

Կայսրը իշխանի հրաժարականը ստանալով սաստիկ վշտացաւ նորա վերայ. և շուտով նորա տեղը մի ուրիշին ուղարկեց Եղիպտոս, որին պատուիրեց. որ աշխատի Փիլիպպոսին մի այնպիսի միջոցով յաջողեցնէ սպանել՝ որ ժողովուրդը չը վրդովուի և նորանց միջումը չը ծագի խոռվութիւն։

Նոր իշխանը առանց ուշացնելու կատարեց կայսեր հրամանը նորա սպանութեան մասին այսպէս. իւր սպասաւորներից երկուքը քրիստոնէայ կերպաւորուելով մի օր մտան եկեղեցի և Փիլիպպոսի աւորութելով՝ մի իւր կղողիէ մայրը պատրաստել էր օտարականաց համար, այնուհետեւ նորանք չը կամենանը՝ որ իւր կղողիէ մայրը պատրաստել էր օտարականաց համար, այնուհետեւ նորանք չը կամենանը այլ ևս մնալ Աղէքսանդրիայում, այլ ամբողջ ընտանիքով փոխադրուեցան Հոռվմ, ահա այսքանն է իմ տեսածը և լսածը։

Թաղէոս վ.

Որդիներս՝ նախ չնորհակալութիւնս յայտնում եմ զառամեալ տէր Մատթէոս հօրը, որ իւր պատմածովը ինձ մեծ բաւականութիւն պատճառեց, այժմս էլ դուք ինձ ուշադրութեամբ լսեցէք, որ ես էլ իմ տեսամութեամբ և ստոյգ դիտեցածը պատմեմ ձեզ:

Երբ Կղողիէն՝ Եւգինէ դստերովը, Սերգէ և Ապիտոն որդիներովը և երկու ներքինիներովը վերադարձան Հռովմ, նորա ազգականները և բարեկամները նորան շատ սիրով ընդունեցին՝ մանաւանդ նորա որդւոցը՝ իրենց հայրենի պատուի համար: Ապիտոնին բարձրացրին հիւլատոսի (գլխաւոր իշխան, փոխանորդ թագաւորի) պաշտօնի. իսկ Սերգէին ուղարկեցին Ափրիկէ փոխանորդի պաշտօնով:

Նորանց քոյր Եւգինէ սուրբ կոյսը մօր հետ առանձնացած փայլում էր՝ հրեշտակական վարքով, զարմանալի առաքինութեամբ և ապշեցուցիչ որբակեցութեամբ, որ նորա օրինակելի կեանքը և հանձարաւոր գոհարներն՝ որ թափվում էին նորա բերանից՝ շատ օրիորդներ տեսնելով և լսելով՝ քրիստոնէութիւն ընդունեցին, որոնց մէջ նշանաւորն եղաւ թոգաւորի ազգական Բասիլա կամ Վասիլա (թագուհի) հրաշագեղ օրիորդը. և որպէս զի նորա մօտ իւր գալ ու գնալը չիմացուի՝ նորանից խնդրեց որ իւր ներքինիները ուղարկէ իւր մօտ՝ որպէս ծառաներ և ինքը նորանցից լիակատար սովորի քրիստոնէական կրօնը: Բասիլան՝ ոչ անազան մի եպիսկոպոսից գաղտնի մկրտուեցաւ, այնուհետեւ երդմամբ ուխտեց որ

մինչև մահը իւր կուսական մարգարիտը փայլուն պահէ:

Բասիլայի մերձաւորները արդէն խօսեցել էին՝ որ նորան տան ամուսին մեծանուն և երկելի Պոմպէոսին, բայց նա ոչ մի կերպով չէր համբգվամ ամուսնութիւն մտնելու: Պոմպէոսն մի աղախնու միջոցով իմացաւ որ Բասիլայի արգելողը Եւգինէն է. այսու ամենայնիւ գեռ սկսեց ապաւինիլ պառաւների միջնորդութեանցը և կախարդների հրաշագործութեանցը. Երբոր ոչ մի կերպ չը գտաւ նորան համոզելու հսարաւորութիւն՝ բողոքեց կայսեր՝ թէ Եւգինէից և թէ Բասիլայիցը: Պոմպէոսը կայսերից ստացաւ լիակատար իրաւունք՝ այն երկուսին դարձնելու կոապաշտութեան. Երբոր ոչ մի միջոցով չը յաջողի նորանց խելքի բերել՝ այն ժամանակ երկուսին էլ չարաչար տանջանքներ տալուց յետոյ գլխատէ:

Պոմպէոսը փորձի համար՝ նորանց երկուսին մասնաւանդ Եւգինէին տուաւ կերպ-կերպ սոսկալի տանձանքներ, բայց նորանք հրաշքների զօրութեամբ և ջանքներ, առաջ նորանք համբերութեամբ յաղթող հանդիսացան և զարմանալի համբերութեամբ յաղթող հանդիսացան և բոնակալին ամաչեցրին և նա յուսահատուած բոլորին էլ զիմատեց. առաջ Բասիլային՝ յետոյ երկու ներքինիներին և ամենից վերջը Եւգինէին:

Կղողիէն երբոր շարունակ արտասաւելով ողբած էր Եւգինէից զրկախլը, մի քանի օրից յետոյ երաշէր Եւգինէից զրկախլը, մի քանի օրից յետոյ երաշէր տեսաւ Եւգինէին՝ որ իրան ասաց «Իմ սիրելի զումը տեսաւ Եւգինէին՝ որ իրան ասաց «Իմ սիրելի մայր, ինչու այսքան յուսահատութեամբ ողբած ես մահը՝ տես ինձ. ես ահա լուսեղինների միջում իմ մահը՝ տես ինձ. ես ահա լուսեղինների միջում երջանկաթիւն եմ վայելում. դու երեք օրից յետոյ

գալու ես իմ-մօտ:» Արդարի երեք օրից յեաոյ Կղողիէն քրիստոնէական պատրաստոթեամբ աւանդեց հողին և քրիստոնեաների ձեռքով և մեծ պատռով թաղաեցաւ: Նորա երկու որդիքը թէև մնացին աշխարհային փառքի և վիճակի մէջ իրանց պաշտօնումը, բայց ամենայն սրբաթեամբ և առաքինութեամբ արժանացան բարի մահուան և խոռնուեցան իրանց ընտանեաց լուսաւոր խմբումը, ահա այսպէս Փիլիպպոսը իւր ընտանիքովը արժանացաւ յաւիտենական փառքի թագաւորութեանը և Աստուածը բոլորիդ էլ արժանացնէ խաղաղ կեանքով յաւիտենական երանաւէտ և անմահ կեանքին ամէն:

Մատթէոս քահանայ.

Թաղէոս հայր սուրբ, ձեր պատմածը մեզ մեծ մոլիթարութիւն և բաւականութիւն պատճառեց, լըսելով մեր իշխան Փիլիպպոսի ընտանեաց վերջին օրերի կրածները և հրեշտակային սրբակեցութեամբ յաւիտենականութիւն վերափոխութիւն:

Թաղէոս Վ.

Տէր Մատթէոս հայր, իմ բաղձանքն՝ իշխան Փիլիպպոսի քրիստոնէութիւն ընդունելուց յեաոյ նորա կեանքի մահուան օրաւայ վերաբերաթեամբ ձիշդ տեղեկութիւն անենալս էր, և ահա նպատակիս հասայ, այժմ մնացէք խաղաղութեամբ, ես կրկին գնում եմ երուսաղէմ, որ այնտեղից վերաթռչիմ ՚ի վերինն երուսաղէմ:

Վ Ե Ր Զ:

Կ. ՊՈԽԻ Ս. ՍՈՓԻԿՅՈՒՄ

Յովհան Ուկեբելանի ատենախօսութիւնը Ս. Եկեղեցւոյն ապահնող զահընիէց Նստրոպիոս թագաւորին ժողովողի ծեռքիցն ազատելու վելաբերութեամբ:

«Թէ որ մի ժամանակ կայ կանչելու «Ունայնութիւն անայնութեանց ամենայն ինչ ընդունայն է: «Ահա անտարակոյս այս ժամանակս է: Ո՞ւր է այն «փառաւոր իշխանութիւնը, ուր է այն մեծամեծ «պատռայ նշանները. ինչ եղան այն հանդէմներն և ուրախութեան օրերն, ուր մնացին այն ծափահաւ «ըստութիւնները, այնչափ շողոփորթութիւններն՝ որ առնում էր ժողովուրգը կրկէսի մէջ ժողովաած: Հովը ամէկ փշելով այն փառաւոր ծառի բոլոր տերենները «թօթափից և արժատից խլեց՝ մէկ կողմ ձգեց...: Առմեն բան անցաւ, աներեսոյթ եղաւ երազի պէս, ծաղկի պէս. շուարի պէս: Ուրեմն յարմար ժամանակ է «որ կրկնենք Հոգւոյն սրբոյ վճիռը թէ «Ունայնութիւն ունայնութեանց ամենայն ինչ ընդունայն է:» «Այս խօսքը պայծառ զրերով պէտք էր զրել հրապարակներում, դոների վերայ ու տների պատերի վերայ. բայց ևս առաւել պէտք է զրել այս խօսքը մեր սոսրտի մէջ և անդադար նորայ վերայ անել մեր խօսրտի մէջ:

«սակցաթիւնները: Իրաւունք չունէի ուրեմն երբոր
«ասում էի քեզ եւտրոպի՛ոս. քո հարստութիւններն
«անհաստատ ու անցաւոր բաներ են: Այժմ փորձով
«հասկացար՝ որ փախստական գերիների պէս նորանք
«քեզ ձգեցին փախան, մասաւանդ թէ մի կերպով
«քեզ մատնեցին և սպանեցին, որովհետև քո թշուա-
«ռութեանդ գլխաւոր պատճառը նորանք եղան: Շատ
«անգամ ասում էի քեզ, թէ աւելի պէտք է սիրես
«իմ յանդիմանութիւնները՝ որչափ էլ դառն երեխն
«քեզ, քան թէ քո շողոքորդների անհամ գովեստները,
«որովհետև լաւ են սիրելոյն տռած վերքերը՝ քան
«թշնամւոյն խարէական համբոյրը: Իրաւունք ունէի
«այս խօսքերը քեզ ասելու՝ թէ չէ: Այժմ ուր մնա-
«ցին այն շողոմարարները, մէկ կողմ քաշուեցան, մո-
«ռացան քո բարեկամութիւնը, միայն իրանց օգտան
«են մտածում՝ քեզ վնաս էլ անելով: Բայց մենք,
«այնպէս չենք, մենք քո բարձրութեան ժամանակին՝
«բարկութիւններիդ համբերեցինք. ընկած ժամանա-
«կիդ էլ կարողացածներիս չափ քեզ վեր կը բռնենք:
«Եկեղեցւոյ դէմ դու պատերազմեցիր՝ բայց նա գիրկը
«բացած քեզ ընդունում է. թատրոնները բոլոր սրբ-
«տով և ամէն ժամանակ սիրեցիր և նորանց պատճառ-
«ռովը այնչափ անդամ մեր դէմ բարկացար, ահա
նորանք քեզ թողին ու մատնեցին:»

Ժողովարդը այս խօսքերը լսելով՝ խօսք տուաւ
որ եւտրոպիսի կեանքը խնայէ. ուստի նորան աքսո-
րեցին կիպրոս կղզին, բայց յետոյ նորան այնտեղ
սպանեցին:

Տէրը՝ իրանից վախեցողների կամքը կատարում է

նորանց աղօթքը լսում և նորանց ապլեցնում է.
Սակայն ձխու 19:

Մոլորուածները նիւթում են չարիքներ. բարի-
ները նիւթում են ողորմութիւն և ճշմարտութիւն.
Առակ. Ժդ. 22:

1865—1913 ԹՌԻԵՐԻ ՆՊԱՐԵԿԵՆԵՐԻ ԳՆԵՐԸ

Սպիտակ հացի գրվաճքան՝ 2 կոպէկ, թանկ ժամանակում՝ 5 կ. սպիտակ ալիւրը փութը՝ 60 կ.—1 ռ., մսի գրվ. 4—5 կ. ձուն՝ 10-ը 5 կ. թանկը՝ 6—7 կ. հաւը՝ 30 կ.—50 կ. արդար խղը՝ գրվ. 15 կ. թանկը՝ 25—30 կ. ձկնկիտը՝ 15—30 կ. հինգ զոյգ մեծ գեղարքունիքը՝ 20 կ. մարտ ամսի բանած թարթի դօշը՝ գրվ. 10 կ. գինու թունկին՝ (չորս չարէքը) 15—20 կ. մեծ ոչխարի մէկ հատը՝ 1 ռ. փայտոնը՝ 30—60 կ.:

Ահա այսպիսի լի ու առատ, այլև խաղաղ ու հանգիստ տարիներում ապրել ենք, իսկ այժմ էլ համաշխարհային 1914—1918 տարիներում ապրում ենք, վայ այս ապրելուն՝ որ ապրում ենք, ահա և այս ժամանակի նպարեղէների գները:

Սպիտակ հացի գրվ. 7 ռ. 50 կ. ալիւրի փութը 160—220 ռ. ցորէնինը 109—160 ռ. գոմէշի միսը՝ գրվ. 2 ռ. տաւարինը՝ 3 ռ. 50 կ. ոչխարինը՝ 4 ռ. 80 կ. խողի միսը՝ 3 ռ. 50 կ. դմակը՝ գրվ. 10 ռ. կաթի մի բաժակը՝ 3 ռ. կարագը՝ 42 ռ. գրվաճքան, պանիրը՝ գրվ. 13 ռ. ձուն՝ մէկ հատը՝ 1 ռ. 50 կ. գետնախնձորի փութը՝ 40 ռ. լոբին գրվ. 2 ռ. 50 կ. կաղամբը՝ գրվ. 1 ռ. փայտի սաժէնը՝ 900—1000 ռ.

հացի երկրորդ տեսակի գրվ. 4 ռ. 50 կ. վերջի տեսակը 3 ռ. 50 կ. ձկնկիթը գրվ. 20 ռ. հաւը 30—40 ռ. ֆայտոնը՝ 30—40 ռ.:

Ամենաբարձեալն Աստուած թող հաշտութեամբ՝
բայց յարատե և հիմնական հաշտութեամի մեծ և բոլոր
պետութիւնների վերջ տայ այս համաշխարհային սոս-
կալի և ազխարհաւեր պատերազմին և կրկին խաղա-
ղութիւն և հանգստութիւն պարզեց բոլոր ազգերին՝
մանաւանդ Հայոց նահատակ ազգիս:



“

ԳՐԻԳՈՐ Ա.Ի.Ա.Գ. ՔԱՀ. ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒ

Աշխատասիրութիւնները

Բ. կ.

1. Խորհրդածութիւն գոկտոր Նելսոն Ամերիկացւոյ և յաւելուածներ (սպառուած)	2	—
2. Ս. Գրոց հին ուժուած պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ և աշխարհի անցքերով. էջ 915	5	50
3. Կանոնադրութիւն Տփխիսի հայ քահանաների միա- բանու. (քննադատելի) սպառուած)	—	10
4. Դրախտի Մարգարիտներ, 1 պատկ. (սպառ.)	—	25
5. Դիւան Տփխիսի Հայոց Եկեղեցիների	—	55
6. Զգուանքներ	—	20
7. Մաշտոց-Մեսրովը Հայոց տառերի և տպագրու- թեան գիւտը և սկզբնաւորութիւնը մեր ազգի մէջ. (սպառուած)	—	10
8. Ոսկի-բարեկամ Դ. տոլ. 334 պատկերներով, էջ 1414	40	—
9. Հանրամատչելի բժշկարան մարմնի վէրքերի և հիւանդութիւնների	2	—
10. Գրիգոր լուսաւորիչ	2	50
11. Զարմանալի տեսիլ	—	10
12. Հրաշագեղն Եւգինէ	2	—

ՀՀ Ազգային գրադարան



NL0348944

41830